Ի· ՏԱՐԻ ԹԻՒ 4329 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 8 ՅՈՒՆԻՍ 1888 (Ն· Տ·) 20 ՅՈՒՆԻՍ 1888 10 ՇԵՎՎԱԼ 1305

20 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Նորատունկեան-խան

غلطه‌ده نورادونكیان خانده آرهولك
غزته‌سی اداره‌سنه

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ [illegible]

20 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ· Պոլսոյ համար Տարեկան կանխիկ վճարով	160
» » Վեցամսեայ »	80
» » Եռամսեայ »	40
Գաւառաց » եւ օտարաց	
Թղթատարով տարեկան	240
Գաւառաց համար եւ օտարաց	
Թղթատարով վեցամսեայ	120
Օտար երկիրներ, տարեկան Ֆրանք	56
» » վեցամսեայ	28

[illegible]

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, 8 ՅՈՒՆԻՍ, 1888

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԽՆԴԻՐ ԵԳԻՊՏՈՍԻ

ԱՆԿՈՒՄ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱՅԻ

(Խմբագր· Յօդ· Թայմզի, 11 յունիս·)

«Նուպար փաշայի պաշտօնանկութիւնը Խտիվին հրամանաւ, թէեւ անակնկալ չի կրնար համարուիլ, այնպիսի դէպք մ'է որ կ'երեւի թէ յանկարծակիի բերած է մեր պետական մարդիկը· Բայց և այնպէս, յոյժ կարեւոր ազդեցութիւն մ'ունի մեր յարաբերութեանց վրայ Եգիպտոսի հետ և եգիպտային գործոց մէջ շահ ունեցող Տէրութեանց հետ·

«Չորս ու կէս տարի յառաջ հրաժարեցաւ Շէրիֆ փաշա, որովհետեւ չէր ուզած համակերպիլ Սըր Իվլին Պէյրինկի հրամանին թէ եգիպտացի զօրքեր Սուտանէն քաշուին, և յօրէ անտի Նուպար փաշա եղաւ Խտիվին Նախարարապետ, այսինքն՝ վարեց Եգիպտոսի ներքին գործերն՝ ի նկատի ունենալով անգլիական քաղաքականութիւնը, բայց առանց հրաժարելու սա պահանջումէ թէ եգիպտային շահուց մասին ինք իւր յարմար դատած ուղղութեան պէտք է հետեւի, և պէտք է խոստովանինք թէ Նուպար փաշա միշտ համարձակապէս յայտնեց և պաշտպանեց իւր այս պահանջումը·

«Կացութիւնն անտանելի էր գրեթէ, և զարմանալի է որ Նուպար փաշա կրցաւ երկար ժամանակ տանիլ զայն առանց ձախողանաց· Բայց յանցանքը վերագրելի չէր բոլորովին Նուպարի, կամ Խտիվին, կամ Սըր Իվլին Պէյրինկի, կամ անգլիական կառավարութեան ուրիշ ներկայացուցչաց յԵգիպտոս, այլ մեր (Անգլիոյ) Նախարարներուն վարանոտ և անկայուն քաղաքականութեան· Նուպար թերեւս չատ տանէր անգլիական իշխանութեան պարզ գործիքը լինելով, եթէ Անգլիա ի սկզբանէ անտի տրամադրութիւն ցուցնէր իսկական Վարչութեան ամէն գործոց պատասխանատուութիւնն ստանձնելու· Բայց Նուպար իրեն յանդիման տեսաւ անգլիացի խումբ մը գործօն և փառասէր պաշտօնեաներ, որք մտքերնին դրած էին ի գործ դնել այնպիսի բարենորոգումներ, որք ազդեցիկ խմբակներու եւ անձանց անհաճոյ լինելէ զատ, բնիկ ժողովրդեան զգացմանց խոտելի էին, մինչեւ իսկ եթէ իմաստուն եւ օգտակար լինէին· Ճշմարիտ է թէ Նուպար փաշա գործի սկսաւ սա համոզմամբ թէ Եգիպտոսի ապահովութիւնն ու բարեկեցութիւնը կրնան պահպանուիլ անգլիական գերիշխանութեան ներքեւ միայն, և պատճառ չկայ ենթադրելու թէ Նուպար փաշա փոփոխած լինի իւր այս հայեացք· Դժբախտաբար, անգլիական քաղաքականութեան անհաստատութիւնն այնպէս էր որ իւր ջղաձգական շարժումներով ու միջամտութիւններով կը զայրացնէր զՆուպար փաշա, և ամէն պատասխանատուութիւն մերժելով՝ Նուպար փաշային ծայրայեղ գաղափար մը կուտար իւր անձնական կարեւորութեան վրայ· Վերջերս Նուպար փաշա եւս քան զես տրամադրութիւն ցուցուց հակառակելու անգլիացի պաշտօնէից կողմէ յանձնարարեալ տնօրինութեանց, ի կիրառութիւն Լորտ Տըֆըրինի հռչակաւոր Տեղեկագրով ծրագրեալ բարենորոգմանց, և դեռ մի քանի ամիս յառաջ Նուպար փաշա խիստ պայքար մ'ունեցաւ Սըր Իվլին Պէյրինկի հետ, Գժտութիւնն այն ժամանակ ծանր հետեւանք չարտադրեց· Բայց Նուպար փաշա, որ ճարտար մարդ մ'է և միանգամայն պարկեշտօրէն անձնուէր է Եգիպտոսի լաւագոյն շահերուն, Եգիպտոսի մէջ իսկ կռուան չունի, ի բաց առեալ այն ազդեցութիւն զոր կը վայելէ իբրեւ գլխաւոր ներկայացուցիչ անգլիական աշխարհակալութեան· Նա ցեղով Հայ մ'է, կրօնքով՝ Քրիստոնեայ և կրթութեամբ Եւրոպացի, և ատելի է ո՛չ միայն Թուրքերուն պաշտօնական հին խմբակին, Մահմետականներուն և ա՛յն Տէրութեանց գործակալներուն որք կը նախանձին անգլիական ազդեցութեան այլ և Խտիվին պալատան ամենաբարձր շրջանակներուն· Երբ հասկցուեցաւ թէ Նուպար աւրուած է անգլիական կառավարութեան հետ և անգլիացի պաշտօնատարք ընդ ակամբ կը նային անոր, իւր անկումն անխուսափելի եղաւ, ըստ քաղաքական մեքենագիտութեան օրինաց որովք կը վարին Արեւելքը·

«Հարկ չկայ քննելու թէ ի՛նչ մասնաւոր խնդիր եղաւ անմիջական պատճառ Նուպար փաշայի անկման· Նախարարաց խորհրդին մէջ կարծեաց անհամաձայնութիւն մը ծագեր է, յորում Խտիվ Նուպարի կարծեաց հակառակ կողմը բռներ է, և անակնկալ կերպիւ պաշտօնանկ ըրեր է զնա, քաղաքավարութեան ա՛յնպիսի բացակայութեամբ մը որ շատ մը նկատումներով ողբալի է, և որուն առաջքը կ'առնուէր անշուշտ եթէ Սըր Իվլին Պէյրինկ բացակայ չլինէր· Ռիազ փաշա կոչուեցաւ նոր Նախարարութիւնը կազմելու· Տարակուսելի է թէ անոնք որ՝ անգլիական և բարեկարգական տեսակէտով՝ դժգոհ էին Նուպար փաշայի եգիպտական քաղաքականութենէն, պիտի կրնա՞ն գոհ մնալ Ռիազ փաշային նախկին պաշտօնին վերադառնալէն· Ռիազ ունի իւր լաւ ձիրքեր, ինչպէս մեր Աղեքսանդրիոյ թղթակից կ'ըսէ· «պարկեշտ, խելացի, աշխատասէր» է, և յԱրեւելս այսչափն ալ կարի յոյժ ներբողելի հանգամանք է· Բայց Ռիազ փաշա միանգամայն «անձուկ և յամառ մտքի տէր» է եղեր, և հաւանական չէ որ ազատական և յառաջդիմական քաղաքականութեան մը հետեւի, բայց եթէ ընդ ուղղակի ազդեցութեամբ Անգլիոյ· Երկբայելու տեղի չկայ որ եթէ անցեալ տարի Նուպար փաշայի Սըր Իվլին Պէյրինկի հետ վէճի բռնուած միջոցին Ռիազ փաշա գործի գլուխ կոչուէր, պիտի հնազանդէր անգլիական նախաձեռնութեան, և թերեւս իւր ճարտարագոյն հակառակորդէն (Նուպար փաշայէն) աւելի հլութեամբ պիտի գործակցէր անգլիացի պաշտօնատարաց· Բայց այն պատեհ առիթը ձեռքէ հանեցինք, և պարագայք այժմ փոխուեր են ինչ ինչ կարեւոր նկատմամբ· Դիտելի է մանաւանդ զի Օսմ· Պատուիրակն յԵգիպտոս, Ղազի Մուխթար փաշա, ջանացած է յառաջ բերել եւ բարձրաձայն գուշակած է Նուպար փաշայի անկումն, և այս բան եգիպտացի ժողովրդեան և բնիկ պաշտօնէից կողմէ նկատուած է յաղթանակ մը Մուխթար փաշայի համար և ձախողութիւն մը անգլիական ազդեցութեան համար·

« · · · Անգլ· Կառավարութիւնն անշուշտ պիտի հասկցնէ Խտիվին և անոր շուրջը գտնուողներուն թէ թոյլ չպիտի տանի որ մեքենայութիւններ, ուստի եւ բխին, խափանարար լինին մեր ձեռնարկած գործին· Լորտ Սալզպըրի կատարեալ տեղեկութիւն ունի արտաքին աշխարհակալութեան վրայ, և գիտէ թէ ի՛նչ ընել պէտք է եգիպտական խնդրոյն վերաբացման թոյլ չտալու համար· Բայց քանիցս ծանր վտանգներու ենթարկեցանք՝ զգուշական բարեդէպ միջոցներ ձեռք չառնլով այլոց յԵգիպտոս միջամտութեան դէմ, և աններելի է կրկնել նոյն սխալը· Եգիպտոսի մէջ մեր զօրութիւն կը կայանայ ո՛չ միայն մեր ֆիզիքական ոյժին վրայ, ո՛չ միայն քաղաքակիրթ աշխարհի մեզ նկատմամբ ունեցած համարման վրայ, այլ և սա՛ իրողութեան վրայ թէ Խտիվին իշխանութիւնը բացարձակապէս կախեալ է Անգլիոյ պաշտպանութենէն· Թէվֆիք փաշա պէտք է զգայ թէ ընդդիմադիր Նախարարութիւն մը կազմել և հարկաւոր բարենորոգմանց իրագործման համար անգլիացի վարիչներուն ըրած ջանքերն ի դերեւ հանել վտանգաւոր գործ է· · · Եգիպտոսի մէջ քաղաքական արդի կացութեան ապահովութեանն համար անհրաժեշտ է որ, Ռիազ փաշա իշխանութեան վրայ մնայ թէ ո՛չ, Խտիվին կառավարութիւնն ամէն կարեւոր գործի մէջ առաջնորդուի Անգլիոյ ներկայացուցչաց խորհրդով·»

Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Պ· Կոպլէ սա հեռագրաւ պատասխանեց Պրազիլիոյ Կայսրութեան արտաքին գործոց նախարարին, գերութեան ջնջման առթիւ·

«Շնորհակալ եմ Ձեր Վսեմութեան, այն լրոյն համար զոր բարեհաճած էր ինձ յաղորդել, Պրազիլիոյ մէջ գերութեան վերջնական ջնջման առթիւ· Այս լուր բովանդակ Ֆրանսայի մէջ յառաջ պիտի բերէ համակրական մեծ շարժում մը Պրազիլիոյ նըկատմամբ։ Ձեզ կ'ուղղեմ թէ՛ իմ անձնական խնդակցութիւնս և թէ հանրապետական կառավարութեան շնորհաւորութիւններն, այն մեծ գործոյն համար զոր կատարեցին Պրազիլիոյ կառավարութիւնն և խնամակալ Իշխանուհին, գերութիւնը բառնալով·»

—Պէլկրատէ կը հեռագրուի թէ Էքսբրէս-Օրիանի կառամարերն յուլիս 1 էն սկսեալ շաբաթն երկիցս պիտի երթեւեկեն Փարիզի և Սելանիկի միջեւ· Թղթատար շոգենաւի կանոնաւոր երթեւեկութիւն մը հաստատուեցաւ Սելանիկի և Կ· Պոլսոյ միջեւ·

—Աւստրիոյ Գահաժառանգ Ռուտոֆ Իշխանին Ակրամի մէջ (Խրուաթաց մայրաքաղաքն) արտասանած բանախօսութիւնք լաւ տպաւորութիւն ըրին Մաճառստանի մէջ· Իշխանը գովեց խրուաթական լեզուին գրական արժանիքն և Եուկո-սլաւ լեզուաց մէջ բռնած կարեւոր դիրքն· հռչակեց խրուաթ զինուորին քաջութիւնը, բայց ըսաւ միանգամայն թէ Խրուաթիա Ս· Ստեփաննոսի Թագին վրայ մարգարիտ մ'է, եւ այսու հասկցնել ուզեց թէ զԽրուաթիա Ունկարիոյ հետ միացնող կապը չպիտի խզուի՝ ընդունելութեամբ խրուաթական ազգային կուսակցութեան փափաքած Ինքնօրինութեան· Գահաժառանգին եւ Իշխանուհւոյն ուղեւորութիւնն ի Պոսնա ժողովրդային համակրանաց մեծ ցոյցեր յառաջ կը բերէ· Յունիս 13 ին Պոսնասէրայ հասան, ուր եռանդագին ընդունելութիւն մը գտան խուռն բազմութեան մը կողմէ, յորում մեծ թուով կը գտնուէին Թուրք գիւղացիներ իրենց ազգային զգեստներով· Ռուտոֆ Իշխան Պոսնասէրայի քաղաքապետին ատենախօսութեան, շնորհակալութեան քանի մը խօսքեր ըսաւ սլաւերէն, յետոյ շարունակեց գերմաներէն, և ըսաւ· «Երջանիկ եմ իմ կնոջս հետ գալով այս երկիր, ուր իմացական ու բարոյական մշակութիւնն այնչափ մեծ յառաջդիմութիւններ ըրած է վերջին ժամանակներս· կայսեր պիտի հաղորդեմ հաւատարմութեան և սիրոյ զգացումները զորս յայտնեցիք·» Կեցցէ՛ներով ընդունեցան այս խօսքերն Իշխանը այցելեց գլխաւոր եկեղեցիները, մզկիթներն ու սինակոկաներն, և Թանգարանը կամ Մուզէոնն, որ կը պարունակէ հետաքրքրաշարժ հնութիւններ· Երեկոյին, պաշտօնական հացկերոյթ և լուսավառութիւնք·

ՀԱՆԴԻՍՔ ՊՈԼՈՆԻՈՅ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ

Շքեղ հանդէսներ կատարեցան ի Պոլոնիա (Իտալիա), տեղւոյն Համալսարանին իններորդ հարիւրամեակին առթիւ· Ամեն երկրաց Համալսարանաց կողմէ պատուիրակութիւններ եկան, զորս իտալացի ուսանողութիւնն ընդունեց հանդիսապէս· Պատմական թափօրներ կազմուեցան, բանախօսութիւններ եղան, հացկերոյթներ տրուեցան, և Ումպէրթօ Թագաւոր իւր ներկայութեամբ պատուեց այս հանդէսներ· Իտալիոյ և Եւրոպիոյ ամէն կողմերէն խուռն բազմութիւն եկած էր Պոլոնիա, այս կարի հազուադէպ հանդիսական արարողութիւնները դիտելու· Ամեն երկրաց համալսարանական ուսանողութեանց այս գումարում շատ երեւելի դէպք մ'եղաւ· Գերման և Ֆրանսացի ուսանողութիւնք, իրարու պատահելով, շատ քաղաքավար ձեւերով ողջունեցին զիրար· Իտալացի ուսանողութիւնը մասնաւոր համակրանօք ողջունեց Ֆրանսայի համալսարանական երիտասարդութեան դրօշը, զոր շատեր համբուրեցին, և Ումպէրթօ թագաւորն եւս, թափօրին մէջ տեսնելով Ֆրանսացի պատուիրակութիւնը, պատուեց զայն· Այլ և այլ ազգէ ուսուցչապետներու ժողովոյ մը մէջ, իտալացի ուսուցչապետ մը լատիներէն ճառ մը արտասանեց, փափաք յայտնելով որ «ժողովրդոց մէջ միակ պայքարը լինի ա՛յն պայքարն որուն կէտ նպատակին են առաքինութիւն և գիտութիւն»· Երջանի՛կ երազ· Որոշուեցաւ երկու հեռագիր ղրկել, մին ֆրանսական հանրապետութեան Նախագահին, Իտալիոյ և Ֆրանսայի համերաշխութիւնն հաստատող, և միւսը Ֆրետերիկ կայսեր, ապաքինութիւն մաղթելու համար· Պոլոնիոյ Համալսարանին Ծերակոյտը պատուակալ տիտղոսներ շնորհեց ամէն ազգաց երեւելի ուսուցչապետներուն, գրագէտներուն, գիտնականներուն, արուեստագէտներուն և իրենց հմտութեամբք հռչակաւոր պետական մարդոց ոմանց·

Եգիպտոսի լրագիրք կը հրատարակեն պատճէնն նամակին որով Խտիվը պաշտօնանկ ըրած է Նուպար փաշան· Խտիվը կ'ըսէ․ —

«Մեր մէջ բա՛նիցս պատահած դժբախտ անհամաձայնութեանց պատճառաւ, զձեզ Նախարարապետի, դատական Նախարարի և արտաքին գործոց Նախարարի պաշտօններէն հանելու դժնդակ հարկին մէջ կը գտնուիմ·» ԹԷՎՖԻԿ

Աղեքսանդրիոյ լրագիր մը, Նուպար փաշայի անկման սկզբնապատճառ համարելով Սըր Իվլին Պէյրինկի և Նուպար փաշայի միջեւ ծագած անհամաձայնութիւնը, սապէս կը պատմէ գործին ելքը·

«Կացութիւնն ա՛յնչափ ձգտեալ էր որ ամենափոքր դիպուած մը բաւ էր խզում մը յառաջ բերելու· Այս դիպուածն ալ հինգշաբթի տեղի ունեցաւ· ՅԱղեքսանդրիա, Ռաս-էլ-Թինի պալատան մէջ, Խտիվին Նախագահութեամբ տեղի ունեցած խորհրդին մէջ, Նուպար փաշա գժտութեան հուրը բորբոքեց· Նախարարք կը վիճաբանէին անուղղակի տուրք վարչութիւնն ուղղակի տուրք վարչութեան հետ միացնելու ծրագրին վրայ, զոր Նուպար փաշա ջերմապէս կը պաշտպանէր, իւր պաշտօնակցաց ընդունել տալու համար· Դժբախտաբար, վիճաբանութեան տաք միջոցին, Նուպար փաշա բարկացաւ և ձայնը բարձրացուց ա՛յնպէս որ վշտացուց Խտիվը· Այս միակ դիպուած բաւ եղաւ պայթեցնելու Վեհապետին եւ Նախարարապետին միջեւ ի ծածուկ մնացեալ գժտութիւնը· Նիստը հոն վերջ գտաւ, և Նախարարք մեկնեցան յոռի տպաւորութեան մը ներքեւ· Նոյն երեկոյ, Խտիվը հեռագիր մը ուղղելով Ռիազ փաշային, ստիպմամբ յԱլեքսանդրիա հրաւիրեց զնա, և ուրբաթ առաւօտ Նուպար փաշային ղրկեց վերոգրեալ նամակը, զոր ստանալուն պէս Նուպար փաշա մեկնեցաւ պաշտօնարանէն·»

Եւրոպական լրագիրք տակաւին կը զբաղին Մակեդոնիոյ Պուլկարաց խնդրով· Կ· Պոլսէ կը հեռագրուի առ Թայմզ· «Ակիւպի գաւառին մէջ բնակեալ Պուլկարք Բ· Դրան աղերսագիր մատուցանելով, արտօնութիւն խնդրեցին բացման կամ օծման համար իրենց այն եկեղեցեաց որք փակ կը մնան յունական եկեղեցական իշխանութենէն իրենց զատուելէն ի վեր· Տեղական Օսմ· իշխանութիւնք կը տեղեկագրեն թէ ժողովրդեան այս մասին գանգատանաց դարման պէտք է տանիլ, Մակեդոնիոյ մէջ յոյն կղերին մեքենայութեամբք յառաջ եկած յուզումն հանդարտեցնելու համար·»

—Մակեդոնիոյ Պուլկարք խնդիր ունենալ կը թուին ո՛չ միայն Յունաց այլ և Ալպանիացւոց դէմ· Կ· Պոլսէ առ Թայմզ ուղղեալ հեռագիր մը կ'ըսէ թէ Ալպանիոյ պուլկար բնակչաց կողմէ պատուիրակութիւն մը Կ· Պոլիս եկած է կառավարութեան պաշտպանութիւնը խնդրելու Ալպանիացւոց կողմէ Պուլկարաց կրած հարստահարութեան դէմ· Ալպանիացիք Պուլկարները կը նեղեն եղեր յոյն կղերէն դրդեալ, որոյ նպատակն է եղեր Պուլկարները խմբովին գաղթել տալ Մակեդոնիայէն·

—Վերջապէս, Մակեդոնիոյ խնդրոյն երրորդ հատուածը կը կազմէ Այնորոզի վանքին գործն, որոյ մասին կը հեռագրուի Կ· Պոլսէ թէ զինուորական դէմքով երիտասարդ և կորովի Ռուսերու Կ· Պոլիս գալն և Այնորոզ երթալը կառավարութեան ուշադրութիւնը գրաւած է· Այս Ռուսք օտար լեզուներ կը խօսին, և չափագիտական շատ մը կարեւոր գործիքներ ունին· Օսմ· կառավարութիւնը քննիչ յանձնախումբ մը պիտի ղրկէ Այնորոզ· Նաև, Կայս· Կառավարութիւնն իւր Փեթերսպուրկի դեսպանին հրահանգներ տուեր է ռուս կառավարութենէն «լիակատար տեղեկութիւն» խնդրելու համար Սեւ Ծովու եզերաց վրայ ամենայն փութաջանութեամբ կատարուած ծովային եւ ցամաքային պատերազմական պատրաստութեանց նպատակին և շարժառիթին վրայ·

—Աւստրիոյ և Ունկարիոյ մէջ կառավարական շրջաբերական մը հրատարակուեցաւ, ծանուցանող այս երկրաց Հրեաներուն թէ Անգլիոյ մէջ ա՛յնչափ շատ գործաւորք գործի կարօտ կը մնան, որ գործի համար Անգլիա գաղթող Հրեայք խեղճ կը լինին·

—Փեթերսպուրկէ կը հեռագրեն Ռեւթէր յունիս 10ին·

«Կը ծանուցուի թէ Զարն, այս ամառ Սմրղանտ երթալու դիտաւորութիւնը թողլով, շարժած է՝ Նախ և յառաջ՝ տնտեսական նկատումներով, և յետոյ՝ տեղի չտալու համար զանազան մեկնութեանց, որք Անգլիոյ մէջ կրնային յառաջ գալ՝ Ռուսիոյ Կայսեր այսպիսի մէկ ուղեւորութեան առթիւ·»

—Պ· Պէնյամին ֆոն Քալլայ, ելմտական Նախարար Աւստրիոյ-Ունկարիոյ և Վարչապետ Պոսնա-Հերսէկի, աւստրիացի և մաճառ Պատուիրակութեանց կողմէ ջերմապէս շնորհաւորեցաւ՝ Պոսնա-Հերսէկի նոր ելմտացոյցին առթիւ, որ աւելի քան 40,000 ֆիորինի հասոյթից առաւելութիւն ցոյց կուտայ· Ֆրանց Եօզէֆ կայսեր գահաճառին այն պարբերութիւն որ կը ծանուցանէր թէ դրաւեալ գաւառաց ծախքերն

—)(41)(—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ՎԱՐԺԱՊԵՏԻՆ ԱՂՋԻԿԸ

ՊՈԼՍԱԿԱՆ ՔԱՐՔԵՐ

—Ցաւալի բան, բայց իրաւունք ունիս, [illegible] վարժապետի մը աղջկան հետ ամուսնանալու ստորնութիւնն յանձն առնելէդ յետոյ, խաբուած ամուսին մը համարուելու ստորնութիւնն ալ յանձն չես կրնար առնուլ· այո, այո, պէտք է աղէկ դաս մը տալ իրեն, աչքը վախցնել· քենէ աւելի ես բարկացած եմ· զիս խաբե՛ց որ «ամուսինս զիս պարահանդէս պիտի տանէր բայց ես մերժեցի·» այս ի՛նչ լրբութիւն է· վայրկեան մը մտածելու չէ, Արամ, կը հասկնա՞ս, վայրկեան մը, կը կրկնեմ, որովհետեւ գիտեմ որ քիչ մը փոփոխամիտ ես: Իր մօրը տունը ղրկելու է, այն ատեն քիչ մը խելքը գլուխը կուգայ թերեւս, եւ ստիպելու է որ խոստովանի թէ ո՞վ է իւր սիրահարը· եթէ չը խոստովանի՝ Դատաստանական խորհուրդն ամէն բան կրնայ յայտնել տալ իրեն: Վերջապէս խօսեցնել տուր ինծի, Արամ, առջի օրէն քեզի ըսի ես, ես այս ամուսնութեան համակարծիք չէի, այդպիսի ծնողքի մը զաւակէն ի՞նչ կը յուսաս, ի՞նչ կրնայիր յուսալ· եթէ բարձր տեղէ մը աղջիկ առնէ մարդ եւ խաղի մը զոհ երթայ, այնչափ չը ցաւիր· բայց գնա՛ փնտռէ այնպիսի աղջիկ մը որ «աչքը գոց ըլլայ» եւ անոր խաղալիքն եղիր, ամենէն ծանր կէտը այս է · · · ։

ԼԶ

Իջուցած էին կառքին պատուհաններուն վարագոյրները· Անդրանիկ վարժապետ իւր աղջիկն ու Թոռնիկը կ'առնէր կը տանէր իւր տունն: Այս էր եղած Արամին հրամանն որ նախորդ գիշեր [illegible] հետ ունեցած տեսակցութենէն յետոյ այլ եւս տուն չէր վերադարձած եւ առաւօտուն կանուխ իւր գրասենեակը կոչել տուած էր իւր աները որուն խստիւ հրամայած էր նոյն օրն իսկ անմիջապէս երթալ իւր աղջիկն առնել իւր տունը փոխադրել, սպառնալով որ եթէ հակառակէր՝ երեկոյին ի՛նք պիտի «դռնէն դուրս նետէր իրեն աղջիկը։» Պատասխանած էր հեզ վարժապետն, ականջներուն չէր ուզած հաւատալ, պատասխանած էր մերթ արտասուալից ու մերթ զայրացկոտ, նախատանօք ու սպառնալիքով, բայց ի զուր, դուրս հանած էին զինք գրասենեակի ծառաներն, եւ անշուշտ ալեւոր ըլլալուն համար իւր մօրուքը՝ զայն չէին բզկտած:

Եւ այժմ Աստղիկ, մահացեալ, այն փողոցէն ուրկէ անցած էր իւր հարսանեկան կառքը նոր կեանքի մը առաջնորդելով զինք, անշուք կառքով մը յամրընթաց կը վերադառնար իւր հայրենի հիւղակը· ողբալի էր այդ կառքը մեռելակիր կառքին չափ եւ աւելի տխուր · · · ո՞վ ըսաւ թէ մահն է մեծ դժբաղդութիւնը:

Վարժապետը նստած էր իւր աղջկան դիմացը, գլուխը կքած գաւազանին վրայ, ոչինչ կը խօսէր, չէր ընդհատեր լռութիւնն որ կը խօսէր աւա՜ղ · · · Յակոբիկը միայն ալեհեր անծանօթ ծերունւոյն հանդէպ որ «պապուկը» կը յիշեցնէր իրեն, և ի լուր կառքին դղրդին, կ'արտասուէր իւր անուշիկ աչուկներով որոց վրայ մայրիկը կը դրոշմէր իւր համբոյրներն· ո՜հ, այդ մայրիկը գիշեր մը երաժշտութիւն լսել կարծեր էր կառքին թաւալումը լսելով, բայց հիմա · · · երբ որդեկին հեկեկանքը կ'ընկերանար այդ խուլ թաւալման, մահասարսուռ աղօթքներ լսել չէ՞ր կարծեր որ կը բարձրանան մեռելակառքին շուրջը · · · ։

Բայց խօսեցաւ Աստղիկ, ի՞նչ կրնար խօսիլ· —մա՛յրը, «ի՞նչպէս էր, ո՛րքան կարօտցեր էր:» Ու յետոյ իւր հօր վրայ դարձնելով խօսքը, ծերացած, փոխուած կը գտնէր· մօրուք ձգած էր վարժապետը, ածիլուելու ծախքը խնայելու համար, անյարդար, ալեխառն, վերջապէս վարժապետական մօրուք մը որ իւր տարիքէն շատ աւելի ծեր ցոյց կուտար զինք· իւր երկար մազերը կ'իջնային ճակտին վրայ ծածկելով իրենց ներքեւ մշտին գծած խորշոմները· իւղոտ Ֆէս մ'ալ դրած էր իւր գլուխը, մինչ կը կրէր սև փողպատ մը մաշած՝ որոյ ճերմակ դերձանները կ'երեւէին· ո՛րքան այլափոխուած էր · հապա իւր ձայնը՝ մարա՜ծ, խռոտած· ո՞ւր էր այն հայրիկը եռանդուն որ երբեմն այն վարժարանին յարկին տակ ուր կը յաճախէր ինք, մերթ այնքան աղու այնքան սրտայոյզ ձայնիւ, մերթ հնչուն ու բարձրագոչ կ'արտասանէր իւր գրուիչ ճառերը, քերթուածներն· ո՞վ պիտի հաւատար թէ այդ թօշնեալ, խամրեալ ճակտին տակ ծածկուած ըլլար այն հրավառ երեւակայութիւնն որ կրցած էր համակ հայ սերունդ մը յուզել· ո՞վ պիտի հաւատար որ այդ անկենդան աչքերէն հո՛ւր բխած ըլլար երբ փրփրալից կ'արտասանէր նա ոգելից հատուած մը:

Ծերունի վարժապետն իւր կողմանէ կը յիշէր այն օրն յորում Ա · · · եանի գծագրիչ-դասատուն, իւր հաւանութեամբն, եկած էր նկարել աշակերտուհի Աստղիկին պատկերն իբր գեղեցկութեան տիպար· կը յիշէ՛ր, կարծես դեռ երէկ · · · բայց ո՞ւր էին այժմ իւր աղջկան վարդագեղ այտերն, ի՛նչ շիջեալ աչեր, Աստուած իմ· այդ մարած անզօր ճառագայթներն ի՛նչ ունէին իրենց մէջ որ թափանցելով խեղճ հօրը սրտին կ'արծարծէին հոն մշտին հուրը: Բայց վարժապետը ոչինչ ըսաւ երբ Աստղիկ կը հարցնէր թէ ի՛նչպէս գտած էր զինքը· «ի՛նչ ես նէ ան ես, աղջիկս, բնաւ չես փոխուեր» կը պատասխանէր, եւ իւր ստելու շփոթը ծածկելու համար կը փայփայէր իւր Թոռնիկն · ի՛նչ սիրուն կը գտնար զնա· անո՛վ երջանիկ կ'զգար ինքզինք պահ մը, բայց պահ մը միայն, վասն զի երբ Թոռնիկը մերթ ընդ մերթ «մամմա, մամմա» կը թոթովէր իւր սնունդը խնդրելով՝ հեգ մեծ հայրն յուսահատ տխրութեան մը մէջ կ'ընկղմէր, յիշելով թէ իւր միակ թոռն այս պահուս կը տանէր իւր տունն ուր չկար «մամա» · · ·

Այդ օր Անդրանիկ Ֆէնէրճեան անիծեց վարժապետութիւնն, անիծեց ճակատագիրն, անիծե՛ց աշխարհը:

Ժամուկէս յետոյ հասած էին Իւսկիւտար, եւ վարժապետին բնակարանը կը պարունակէր ընտանեաց բոլոր անդամներն որոց վրայ հատ մ'աւելցած էր, —Թոռնիկը:

Կը քամէին իրենց սրտերը միմեանց այտերուն վրայ, ժամերով իրարու փարած մնացին մայր ու աղջիկ, իրարու կը խառնէին իրենց արտասուքը· չէին խօսեր, իւրեանց հառաչանքներն, արտօսրն, հեծկլտանքները կը խօսէին իրենց տեղ եւ կ'ըսէին, կը պատմէին ինչ որ չէին կըրնար իրենք պատմել · · · :

Ա՜հ ճշմարիտ սփոփանքը, մօր մը գըգուանքը · · · Ի՛նչ զօրութիւն կար մօրն մատներուն վրայ որ հպելով իւր ճակտին սև սև մտածութիւններ կը քաշէին դուրս անկէ· կը կպչէին անոր շրթունքն իւր ճակտին, կը կպչէին անբաժան, իբր դուրս հանելու ժահրն զոր կը ծծեն · · · Բայց ո՞րը սիրել· այդ լուսադէմ Թոռնի՞կը· մեծ մայրն անոր վրայ ալ կը խոյանար, կ'առնէր իւր գիրկը, կը հոտոտէր, կը խածնէր իւր սրտին այդ հատորիկը· «որքա՜ն կը նմանէր իւր մօր:» Եւ Աստղիկ կը մտածէր· ինքն ալ օր մը մանուկ էր եղած եւ այն ատեն մայրիկը նոյն գուրգուրանքներն ունեցած էր իւր նկատմամբ· ա՜հ, երանելի մանկութիւնը: Տե՛ս, կը ծիծաղէր անուշիկ, զուարթ՝ երբ այնքան տխուր էր բաղդն, կը խաղար նա, կը ճչէր ու կը թոթովէր «մայրիկ» եւ մերթ անհասկանալի, անորոշ բառ մ'ալ կը հնչէր իբր «հայրիկ»:

—Ի՞նչ կ'ըսէ կոր, աղջիկս, ի՞նչ կ'ըսէ կոր, հարցուց մեծ-մայրն անհամբեր եւ հրճուանօք:

—Հայրիկ կ'ըսէ կոր, մայր:

—Ի՛նչ հայրիկ, չէ, թող չը սորվի անանկ հօր մը անունը, ի՛նչ հայրիկ, մըրմռաց մոլեգին վարժապետը, մելամաղձօրէն երերցնելով իւր գլուխը:

ԼԷ

Երեկոյեան ընթրիքէն յետոյ մայրն աղջկան հետ առանձնացած էր իւր սենեակը, վարը թողլով վարժապետն· ու այս պահուս Աստղիկ նստած այն աղքատիկ օրօրոցին քով որ սենեկին երկու որմերուն ակիւններէն կախուած էր եւ ուր կը նիրհէր Նահապետեանց մանկիկը, կը պատմէր, ձայնը կոկորդին մէջ խեղդելով, իւր հետաքրքիր մօրը այն պարագաներն որ այս յանկարծական բաժանումն յառաջ բերած էին· «բաժնուի՞լն ի՛նչ է· երիկ-կնկան մէջ ատանկ բաներ կը պատահին, նորէն կը հաշտուիք իրարու հետ եւ այս ալ կը մոռնաք» կը պատասխանէր մայրն անկեղծ շեշտով մը բողոքելով իւր աղջկան «բաժանման» բառին դէմ· «կամաց, մայր, կամաց ըսէ, կ'արթննայ հիմա» կ'ըսէր Աստղիկ մեղմաձայն, վախնալով որ չը զարթնու մանկիկն, եւ կը շարունակէր իւր սրտայոյզ պատմութիւնը մէկ ձեռքովն երերցնելով օրօրոցին չուանն եւ միւսովն իւր արտասուքը սրբելով· «հերի՛ք, աղջիկս, հերի՛ք» կը մռմռէր մայրն խանդաղատելով իւր աղջկան վրայ որ մերթ կ'երթար իւր որդեկին տաքուկ այտերուն վրայ սիրավառ համբոյրներ դրոշմել մեղմօրէն, տեսնել անոր լուսաշող դէմքը եւ անոր վրայ մոռնալ ամէն բան:

ՏԻԳՐԱՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ

(Շարունակելի)

այս տարի բոլորովին պիտի գոցուին նոյն գաւառաց հասոյթովը, փայլուն ապացոյց մ'է Պոսնա-Հէրսէքի ճարտար վարչութեան ի ձեռն Պ. Ֆոն Քալլայի, ինչպէս և նիւթական մեծամեծ բարւոքմանց որք տեղի ունեցած են այդ գաւառաց մէջ, գրաւման սկիզբէն ի վեր։

—Թէև Ֆրանձ Եօզէֆ Կայսեր գահաճառը բոլորովին խաղաղասէր հանգամանք մ'ունէր, բայց Աւստրիա-Ունկարիա չէ թուլցուցած իւր զինուորական պատրաստութիւնները։ Ի մօտոյ յոյժ ընդարձակ յառակաձեւոյ մը վրայ ռազմափորձեր տեղի պիտի ունենան Աւստրիոյ լեհական սահմանագլխոց վրայ, ուր բնակեալ գիւղացիներուն այժմէն կ'ազդարարուի որ զօրաց պաշար և երիվարաց խոտ հայթայթեն մեծաքանակ։

—Խոտմալուբկի Դուքսն ընտանեօք Սպանիոյ մէջ ուղեւորած միջոցին, Դքսուհւոյն գոյքերուն մէջէն շատ մը գոհարեղէններ պարունակող տուփ մը գողցուեցաւ։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Բալուի վիճակէն երեսփոխան ընտրուած է Վսեմ. Աղնաւոր Յովհաննէս էֆէնտի։

Գոհութեամբ կը ծանուցանենք թէ երէկ Ելմտական նախարարութեան հաղորդուեցաւ կայս. Իրատէ մը որ կը հրամայէ 1000 ղրուշի ամսաթոշակ մը յատկացնել Պատրիարքական նախորդ փոխանորդ Բուսճուքեան Գեր. Գէորգ վարդապետին։

Երէկ առաւօտ Ազգային և Քաղաքական Ժողովոց Ատենապետք ժամանոր խորհրդակցութիւն մ'ունեցան Ս. Պատրիարք Հօր հետ Երուսաղեմատան մէջ։

Չնքուշի վանահայր Արժ. Տ. Մինաս վարդապետ յունիս 5 ամսաթուով հեռագիր մը ուղղած է ի Պատրիարքարան, ծանուցանելով թէ վիճակին Ատիչ գիւղի ժողովուրդը տրամադիր է խմբովին այլուր գաղթել։

Սոյն խնդրոյն համար մայրաքաղաքս գտնուող 300 հոգւոյ չափ Չնքուշցի ազգայինք՝ երէկ բազմաստորագիր հանրագրութեամբ ի Պատրիարքարան դիմելով, Գեր. Պատր. Փոխանորդ Հօր ներկայացան իրենց վիճակին դարմանը խնդրելու։

Գեր. Փոխանորդ Հայրն զժողովուրդն հայրաբար յորդորեց և մխիթարեց, և Ս. Պատրիարքի հրամանաւ՝ հեռագիր մ'ուղղեց ի Չնքուշ, որով կը յուսադրէ զԱրժ. Մինաս վարդապետն, զեկուցանելով միանգամայն թէ ժողովրդեան խնդիրն ընդ փոյթ պիտի ներկայացուի ի Բ. Դուռն յատուկ թագրիրով մը։

Մայր-Դիւանն երէկ Նախաքննիչ Դիւանաց անդամներուն ի պաշտօնէ ծանուցանելով իւրեանց ընտրութիւնն, հրաւիրեց զնոսա ընտրել իրենց դիւանաց Ատենապետներն, և անունն հաղորդել իրեն մինչև յունիս 20, որպէս զի Ազգ. Ժողովոյ գումարումէն առաջ, որ տեղի պիտի ունենայ յունիս 24ին, Ատենապետաց Դիւանը կարենայ կազմակերպուիլ։

Ռոտոսդոյէն կը գրեն մեզ յունիս 4 Թուականաւ.

Կարծես չէին բաւեր Ռոտոսդոյի մէջ ծագած կնճռոտ խնդիրներն, որոց լուծումը դեռ կ'սպասուի, ահա խնդիր մ'ալ կ'արծարծի ի Զօրլու և նոր նեղութիւն մ'ալ կ'աւելնայ մեր Սրբազան Առաջնորդ Հօր ծանրածանր զբաղմանց վրայ։ Հիմա տակնուվրայ եղած է Ռոտոսդոյ, թաղականի խնդիր, դպրոցի խնդիր, վերջապէս ամեն կողմ խնդիր։ Մեր Սրբազան Առաջնորդն իրաւամբ յուսահատելով այս կացութենէ կը լսենք թէ անդառնալի կերպիւ հրաժարելու որոշումը տուած եւ մինչեւ իսկ իւր հրաժարականը ղրկած է ի Պատրիարքարան։ Գաւառական ընդհանուր ժողովը վաղը արտաքոյ կարգի նիստ պիտի ունենայ Առաջնորդի հրաժարման խնդրոյն համար։ Անձնական բորբոքեալ կրից խաղաղացման պիտի կրնա՞յ նպաստել Գեր. Ներսէս Սրբազանի կամովին հրաժարումն. դէպքերը պիտի պարզեն ամեն բան։

Նիկոմիդիոյ կառավարիչ. Սէլիմ Սըրրի փաշա՝ գաւառին քանի մը պաշտօնականներով կիւրակէ օրն յԱրմաշ գացեր և գիշերն անդ մնացեր է, կը հաւաստեն թէ, Նիկոմիդիայէն յԱրմաշ խճուղի մը պիտի սկսի շինուիլ մօտ օրէն, և այս ուղղութով 4 ժամէն Նիկոմիդիայէ յԱրմաշ երթալու դիւրութիւնը պիտի կրնան ունենալ ուխտաւորք։

Հանգուցեալ Գէորգ էֆ. Զարդարեանի մահուան առթիւ, հետևեալ կենսագրական ծանօթութիւնք կը հաղորդուին մեզ.

Զարդարեան էֆ.ի կորուստը մեծ է թէ՛ անհատական եւ թէ՛ ազգային տեսակէտով, զի հանգուցեալը գործնական միտք մ'ունէր որով յաջողած էր մէն միայնակ հիմնել կարեւոր գործ մը և վարել զայն բաղդին ամեն փորձութեանց դէմ. Հանրային տեսակէտով, իւր բազմադիմի զբաղմանց մէջ ոչ նուազ աշխատած է նաև ազգային գործոց։

Տարիներով Թաղական Խորհրդական եղած է ի Գում Գաբու և կարեւոր մասնակցութիւն մ'ունեցած է Մայր Վարժարանի հոգաբարձութեան մէջ։ Երկար ատեն ծառայած է ազգին իբր ազգ. երեսփոխան և իբր Քաղաքական Ժողովոյ անդամ. Վարած է նաև Ազգ. Հիւանդանոցի հոգաբարձութեան պաշտօնն և այսօր Ազգն իրեն կը պարտի Մոմարանի հաստատութիւնն որ Ազգ. Հիւանդանոցի հասութից կարեւորագոյն աղբիւրներէն մին է։

Վերջերս անդամ էր նաև Մաքրիքէօյի Թաղապետական Ժողովոյ ուսկից հրաժարեցաւ իւր հիւանդութեան պատճառաւ. Դեռ վերջին օրերս երբ ինքը կը տառապէր հիւանդութեան անկողնոյն մէջ, Կեսարիա, իւր ծննդավայրն, կ'ընտրէր զինքն ազգ. երեսփոխան, իւր ամենէն գործունեայ եւ ազգասէր զաւակաց միոյն յանձնելով ներկայացնել զինքն Ազգ. Երեսփոխանական Ժողովոյ մէջ։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Փոխանորդարանէ Ազգ. Պատրիարքարանի

Կարինցի Գույումճը օղլու Մկրտիչեան Պօղոս անուն ազգային մը եօթն ամաց հետէ յոտապութիւն ելած և անյայտ եղած է։

Յիշեալն ատաղձագործ է արհեստիւ, ամաց իբր երեսնից, միջակ հասակաւ, խաժակն, հերօք և ընչացիւք շէկ, ունի մեծ քիթ, ձուաձեւ դէմք և վզին վրայ մի ուռոյց։

Նոյնպէս Եդեսացի Ազարեան Անանիայի որդի Ադամ անուն եօթնևտասնամեայ պատանին՝ որ հասակաւ է միջակ, յանձնէ փոքր ինչ նիհար, դէմքը ճերմակի մօտ գեղին, աչքերը՝ մեծ ու սեւ, ատամունքը՝ խոշոր և բերնին վերի կարգի առջեւի ատամունքէն մին կիսովի կոտրած, նա՛ որդ մայիս ամսոյ 12էն յանկարծակի անյայտ եղած է։

Կը յանձնարարուի Արգոյ Ազգայնոց, որ եթէ երբեք յիշեալ անձանց ողջ կամ մեռեալ լինելուն մասին ո և է ծանօթութիւն ունին, բարեհաճին ծանուցանել Ազգային Պատրիարքարանիս ի գիտութիւն։

7 յունիս 1888
Կ. Պոլիս

Պէշիկթաշի Մաքրուհեան վարժարանի ամավերջի հարցաքննութիւնք պիտի սկսին յունիս 10 ուրբաթ օրն եւ պիտի տևեն մինչեւ ուրբաթ 1 յուլիս։ Ի դիւրութիւն ծնողաց, բարձրագոյն կարգաց լեզուի եւ գիտութեանց քննութիւնք կիրակի և ուրբաթ աւուրց թողուած են։ Քննութեան պիտի սկսին առաւօտեան ժամ 1ին ըստ թրքաց և պիտի տեւեն մինչեւ ժամ 10, միջա 5-7 ընդմիջմամբ։ Կիրակի աւուր թողուած քննութիւնք միջօրէի ժամ 6ին պիտի սկսին։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՏՈՒԱՆՇԱՆՔ, ԱՍՏԻՃԱՆՔ ԵՒ ՊԱՇՏՕՆԱԲԱՇԽՈՒԹԻՒՆՔ

Պոլսոյ վերաքննիչ ատենի անդամ անուանուեցաւ ընչըրալ ամբաստանիչ ատենի անդամներէն Թէվֆիք պէյ։

Մուսուլի նախնական դատարանին ընդհանուր դատախազի օգնական անուանուեցաւ Վանայ նախնական դատարանի ընդհանուր դատախազի օգնական Եունիս էֆէնտի և նմա յաջորդեց Մուսուլի նախնական դատարանին ընդհանուր դատախազի օգնական Սապրի էֆէնտի։

Գասթամունի նահանգին Նըէյլի գաւառակին գայմագամ անուանուեցաւ Ճումայի Պալայի նախորդ գայմագամ Մէճտի էֆէնտի։

Վանայ նահանգին Կարճկան գաւառակին գայմագամ անուանուեցաւ Ակնայ նախորդ գայմագամ Բեհճէթ էֆէնտի։

Իւլայի երկրորդ աստիճան տրուեցաւ վիճակագրութեան յանձնաժողովոյ առաջին քարտուղար Խալիլ էֆ.ի։

Սանիյէի երկրորդ աստիճան՝ նոյն յանձնաժողովոյ դիւանին քարտուղար Ալի պէյի և Հուսէյնայի Նադիպ իւլ-Էշրաֆի գայմագամ Ապտիւրրահման էֆէնտիի։

Առաջին կարգի Մէճիտիյէ պատուանշան տրուեցաւ Հալէպի զօրաբաժնին հրամանատար Ֆերիգ Ալի Սաիմ փաշայի։

Առաջին կարգի Շէֆգաթ՝ Հասան Ֆեհմի փաշայի կնոջ և մայրաքաղաքիս սպանիական դեսպանի կնոջ Տիկին Կիլերմօ Բրեսոյի։

Երրորդ կարգի Մէճիտիյէ՝ Էնկիւրիի Հռոմէականաց առաջնորդ Առաքելեան Կարապետ Գերապայծառին, ի Տրեզոնդ բնակեալ պատմագէտ Տոքթոր Ֆէլիքս Պոնի։

Այլ և այլ կարգի պատուանշանք տրուեցան Սպանիոյ արտաքին գործոց նախարարութեան գլխաւոր պաշտօնէից ոմանց։

ԵԼՄՏԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Ելմտական Ժողովն երէկ դարձեալ ի նիստ գումարեցաւ ընդ նախագահութեամբ Բարձր. Մեծ-Եպարքոսին և մինչև իրիկուն զբաղեցաւ ելմտական կարեւոր խնդիրներով։

Այս պատճառաւ Ելմտական Վսեմ. Նախարարն իւր պաշտօնատեղին չկրցաւ երթալ։

[illegible] կ'իմանայ թէ Յանձնաժողովը կը խորհի այն միջոցներուն վրայ որովք կարելի է Ելմտացոյցին երկուք ու կէս միլիոն ոսկւոյ բացը գոցել։

ԱՆԳԼԻԿԱՆ ԴԵՍՊԱՆ

Ի բացակայութեան Սըր Ուիլիէմ Հուայթի, որ երէկ մեկնեցաւ մայրաքաղաքէս, անգլ. դեսպանատան գործերը փոխանորդաբար պիտի վարէ առաջին քարտուղար Պ. Էտմընտ Ֆան։

Այս առթիւ թէեւ կ'ըսուի թէ Սըր Ու. Հուայթ Վիեննայի դեսպան պիտի անուանի և նմա պիտի յաջորդէ աստ Լորտ Տըֆըրին՝ հանրածանօթ նախկին դեսպանն Կ. Պոլսոյ, սակայն Թ-րէյ, անստոյգ համարելով այս զրոյցն, աւելի հաւանական կը գտնէ թէ Սըր Ու. Հուայթ միմիայն անձնական գործոց պատճառաւ Լոնտոն ուղեւորած է։

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Մէարիֆի ժողովոյ անդամներէն Ազիզ պէյ երէկ Պրուսա ուղեւորեցաւ։ Ազիզ պէյ պաշտօն ունի տեղւոյն վարժարանաց նկատմամբ ինչ ինչ բարենորոգումներ ի գործ դնել ինչպէս նաև քննութիւններ կատարել Նորակառոյց նախնական Միլքիյէ վարժարանին նկատմամբ։

—Քաղաքային երկրորդական վարժարանաց քննութիւնք պիտի սկսին յառաջիկայ յուլիս 2ին։ Այս առթիւ Կրթական Նախարարութիւնն յատուկ քննիչներ կարգած է։

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Առողջապահական Ժողովն երէկ իւր սովորական նիստը կազմեց։ Բաց ի անգլիական պատուիրակ Տօքթ. Տիքսընէ, օտար տէրութեանց միւս բոլոր ներկայացուցիչք բացակայ էին, առանց կանխաւ իմաց տալու։

Ժողովոյ անդամոց օրինական թիւը թէեւ 21 է, սակայն այժմ 19 ի իջած է, որովհետեւ թուրք անդամներէ մին յատուկ պաշտօնով Հիճազ կը գտնուի եւ Եւրոպացի անդամոց մին ալ հանգստեան կոչուած է։ Արդ, ժողովը նկատելով որ 19 անդամներէ 9ը ներկայ գտնուած են, երէկ իւր սովորական նիստը գումարեց եւ իւր սեղանին վրայ գտնուած խնդիրները կարգադրեց։

—Առողջապահական վարչութիւնը տեղեկանալով որ Պոմպէի և շրջակայից մէջ քոլէրան կ'աւելնայ և արագօրէն կը տարածուի, իւր երեկի նիստին մէջ որոշեր է որ Պասրայի և Կարմիր ծովու մէջ առողջապահական խիստ միջոցներ ձեռք առնուին այդ կողմերէ եկած նաւերու վրայ։

—Առողջապահական վարչութեան կողմէ կարգեալ յատուկ պաշտօնեայք մայրաքաղաքիս ամեն կողմն ի վաճառ հանուած լիմոնատ կազօզները կը քննեն հաստատելու համար թէ այդ ըմպելիք հանրային առողջութեան վնասակար ե՞ն թէ ոչ։

ԾԽԱԽՈՏԻ ՏՈՒՐՔԸ ԵԳԻՊՏՈՍ

Եգիպտոս ներմուծեալ ծխախոտի տուրքի բարձրացումն, զոր մասնաւոր հեռագիրէ առնլով ծանուցած ենք արդէն, Գահիրէի պաշտօնական լրագրին մէջ հրատարակուած է խտիւական հետեւեալ պաշտօնագրով։

Յօդ. 1. Ներկայ հրամանագրոյ հրատարակման թուականէն սկսեալ, մինչև 30 յունիս 1890, Եգիպտոս ներմուծեալ ամեն տեսակ օսմանեան ծխախոտներէ գանձելի տուրքն որոշուած է տասն հինգ մէկ տասներորդ ղրուշ, եգիպտական դրամ, այն ծխախոտներուն համար որք Օսմ. ծխախոտի շահակցական Րէժիին կողմէ արտօնագիր (Րէֆթէ) ունին եւ տասն ութնուկէս ղրուշ այն ծխախոտներուն համար որք արտօնագիր չունին։

Յօդ. 2. — Օսմ. ծխախոտի ներմուծման տուրքը մէն մի քիլօկրամի համար եգիպտական դրամ 10 ղրուշ որոշուած կը մնայ։

Յօդ. 3. — Ամերիկեան, անգլիական, յունական, իտալական, հոլանտական, բորթուգալեան, շուէտական և Նորվէրկեան ամեն տեսակ ծխախոտներէն առնուելիք տուրքն որոշուած է եգիպտական դրամ 14 ղրուշ։

Յօդ. 4. — Պարսկական թէմպէքիի ինչպէս նաև սիկառներու ներմուծումն արգիլուած է մասնաւորաց և պետական մենավաճառի վերածուած կը մնայ։ Այդ մենավաճառի արտօնատերաց կողմէ ամեն երկիրներէ բերուած սիկառներուն տուրքն հետեւեալ կերպիւ որոշուած է։

Ստորին տեսակէ մալթէզ եւ համանման սիկառներու մէն մի քիլօկրամին վրայ 17 ղրուշ։ Ընթացիկ կոչուած սիկառներու քիլօկրամին վրայ 25 ղրշ։ Ընտիր տեսակ սիկառներու քիլօկրամին վրայ 60 ղրուշ, ամենքն ալ եգիպտական դրամ։

Յօդ. 5. — Ամեն տեսակ և ամեն ձեւ ծխախոտ որք Եգիպտոս կը հանուին անտի ուրիշ երկիր փոխադրուելու համար, պէտք է յայտնուին Մաքսատան մէջ, ցամաք հանուելէ առաջ, և ուղղակի Մաքսատան մթերանոցները փոխադրուին։ Այս տրամադրութեան հակառակ շարժողները պիտի նկատուին իբր մաքսանենգութեան փորձ մը, և հետեւաբար պիտի պատժուին՝ ապրանքը գրաւուելով և վճարելի մաքսատրոց կրկնապատիկը տուգանք մը առնուելով։

Յօդ. 6. — Նախորդ օրէնքներէ և հրամանագրերէ բղխող ամեն հակառակ տրամադրութիւնք ջնջեալ կը նկատուին յետ այսօրիկ։

ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆ

Այն 250,000 ոսկւոյ փոխառութեան փոխարէն, զոր Ելմտական Նախարարութիւնը կնքել կուզէ «Պանք տը Քոնսդանդինօբլ» դրամատունէն, մետաքսի և ձկնարանի տուրքերը ցոյց պիտի տրուին իբր երաշխաւորութիւն և այդ տրոց վարչութիւնն յանձնուած է Հանրային Պարտուց վարչութեան։

«ՏՕՆԱՅ» ՇՈԳԵՆԱՒԻՆ

Ֆրանսական հիւպատոսարանի դատարանին կողմէ տրուած որոշման համաձայն, այդ դատարանի նախագահն՝ ընդհ. հիւպատոս Պ. Կաղէյ, ընկերակցութեամբ երկու անդամոց և քարտուղարին երէկ առաւօտ շոգեմակոյկով մը բախման վայրը գնաց։ Դատարանի անդամոց կ'ընկերանային նաւապետ Պ. Օպէռ, Տօնայի հրամանատար Պ. Պէնուա իւր փաստաբանն՝ Պ. Պառտօ, անգլ. Նէյխ[illegible] շոգենաւուն գործակալ Պ. Ուիտօ, փաստաբանն՝ Պ. Քուդօ ինչպէս նաև ապահովագրական վեց ընկերութեանց ներկայացուցիչ փաստաբան Պ. Պարօձի։

Տեղւոյն վրայ կատարուած այս քննութիւնը տեւեց երկու ժամէ աւելի։

* *

Յայտնի է թէ Տօնայ շոգենաւն, իւր խրած վայրէն հանուելէ յետոյ, Հարէմ Իսկէլէսիի առջեւ տարուած էր, մաքրուելու համար, և անտի Ստենիայի ծովախորշը փոխադրուած էր որպէս զի սպասէ անդ մինչև որ հիւպատոսարանի դատարանն իւր վճիռը տայ։

Արդ, պարսկական դեսպան Միրզա Մոհսին խան որ իւր բնակութիւնը Ստենիայի ամարանոցը փոխադրած է մի քանի օր է ի վեր, բողոքած էր Նաւահանգստի Վերատեսչութեան՝ թէ ֆրանսական շոգենաւն որ իւր ծովեզերեայ ամարանոցին մօտ կը գտնուի, գարշելի հոտեր կը բուրէ։ Ասոր վրայ, մասնախումբ մը կարգուեցաւ որ գնաց այցելեց Տօնայն և տեղեկագիր մը պատրաստեց անոր վիճակին վրայ։ Այդ տեղեկագրէն կ'երեւի թէ շոգենաւուն ներսի կողմը բոլորովին մաքրուած է, և թէպէտ արտաքին կողմն յոյժ յոռի երեւոյթ մը կ'ընծայէ, այսու հանդերձ դրացեաց առողջութեան վնասելու հանգամանք մը չի կրեր այն։

Միրզա Մոհսին խան գոհ չմնալով այս նպաստաւոր վճռէն, կրկին ձեռնարկներ ըրաւ Նաւահանգստի վերատեսչութեան մօտ որուն հրամանաւ Մէսաժըրիի պաշտօնեայք նախընթաց առաւօտ Տօնայն հանեցին Ստենիայի ծովախորշէն և Պէօյիւքտէրէի դէմ, Ումուր Եէրի կոչուած տեղը փոխադրեցին զայն։

Իտալական դեսպանուհի Տիկին Պլան Վառնայի վերջին շոգենաւով մայրաքաղաքս վերադարձաւ ընկերակցութեամբ Պառոն Պլանի որ իւր ամուսնոյն ընդ առաջ գնացած էր ի Վառնա։

—«Պանք տը Քօնսդանդինօբլ» դրամատան տնօրէն Պ. Քօռօնիօ երէկ Ֆրանսա ուղեւորեցաւ։

—Իտալական դեսպանատան պահակ Սէ[illegible] շոգենաւուն հրամանատար Պ. Ռէքոտի աստիճանի բարձրացում ունեցած է և յառաջիկայ ամիս Իտալիա պիտի ուղեւորի ուրիշ պաշտօնի մը գլուխ անցնելու համար։

—[illegible] զրոյց մը կը յիշէ թէ Օսմ. ծխախոտի Րէժիի ընկերութիւնն հրաժարեր է իւր դրամագլուխն իջեցունելու խորհուրդէն։

—Ռուսիայէն առնուած լուրերը ցորենի գնոց վրայ անկում մը կը ծանուցանեն։

—Պառոն տը Հիրշի փաստաբան Պ. Ժիւլ Տիէձ երէկ Լոյտի շոգենաւով Վառնա ուղեւորեցաւ ընդ առաջ իւր ամուսնոյն որուն հետ Կ. Պոլիս պիտի վերադառնայ վաղը։

—«Պանք տը Քօնսդանդինօբլ» դրամատան և Պ. Վուրոսի մէջ դատ մը կար, մաս մը բաժնեթղթոց մասին զորս այս վերջինն աւանդ թողած էր անդ և Պանքան վաճառած էր։ Այս դատ հաշտարար կարգադրութեամբ մը վերջացաւ։

—Պ. Լէօնիտաս Պալդաձի, որ Թուրքիոյ բազմաթիւ հանքաց մենաշնորհն ստացած լինելով, Եւրոպա ուղեւորած էր, Վիեննայի ելմտական ակմբոց մէջ յոյժ լաւ ընդունելութիւն մը գտեր է և այժմ Բարիզ կը գտնուի ուր կ'աշխատի դրամատեարց խումբ մը կազմել իւր մենաշնորհն շահագործման համար։

—Իտալական ընդհ. հիւպատոս Պ. Սեմմոլէգի որուն Մարսիլիոյ ընդհ. հիւպատոս անուանումը ծանուցինք երէկ, յառաջիկայ ամսոյ մէջ միայն պիտի մեկնի իւր նոր պաշտօնատեղին։ Իւր յաջորդը, Բարբանօ ասպետն, ժամանակաւ Կ. Պոլսոյ մէջ դեր-հիւպատոսի պաշտօն վարած է և այժմ Համպուրկ կը գտնուի հիւպատոսի պաշտօնով։

—Նախընթաց օր Բերայի գերմանական դեսպանատան մատրան մէջ հանգուցեալ Ֆրէտէրիք կայսեր հոգւոյն համար կատարուած աղօթից ներկայ գտնուած է նաև Յունաց Պատրիարքարանի մեծ Լոգոթէթ Արիսթարքի պէյ։

—Չէնպէրլի Թաշի նորոգութիւնք զոր Քաղաքապետութիւնը պիտի կատարէր, Կրթական Նախարարութեան միջոցաւ պիտի կատարուի։

—Սուրիոյ մէջ անանուն տարափոխիկ հիւանդութիւն մը ծագած է որ երթալով կը տարածուի։

Լիբանանէ եկած հեռագիրք կը ծանուցանեն թէ այդ հիւանդութիւն նոյն կողմերն եւս տարածուիլ սկսեր է։

—Պաղտատի երեւելիներէն Քէրպէլայի նախկին կառավարիչ Մազհար փաշա, որ երկար ատենէ ի վեր ան կողմը կը ծառայէր, երէկ առաւօտ մեռաւ իւր ապարանքին մէջ յԱզգէբալ։ Յուղարկաւորութիւնը կատարուեցաւ մեծ հանդիսիւ և մարմինն ամփոփուեցաւ Սուլթան Մահմուտի դամբարանին մօտ. Վեհ. Սուլթանին հրամանաւ յուղարկաւորութեան ծախքը կայս. մասնաւոր Արկղէն վճարուեցաւ։

—Սուրիոյ կուսակալէն և Սուրրէի Հիւմայունի տնօրէնէն կայս. պալատան առաջին քարտուղարութեան ուղղեալ հեռագրեր կը ծանուցանեն թէ Նուիրական կարաւանը Դամասկոսէ ճամբայ ելեր է ամսոյս 2ին։

—Կրէտէի ընդհանուր Ժողովն ելմտացոյցի բացը գոցելու համար որոշեր է 60,000 ոսկւոյ փոխառութիւն մը կնքել և խնդիրը ներկայացուցեր է Բ. Դրան։

—Աղեքսանդրիոյ լրագիրք կը ծանուցանեն թէ Պայրամի առաջին օրը, շնորհաւորական այցելութեանց առթիւ, սովորականէն շատ աւելի բազմաթիւ այցելուք խռնուեր են Մուխթար փաշայի ապարանքին մէջ։ Բարձրաստիճան պաշտօնատարաց մէջ կը նշմարուէին նաեւ անգլիացի պաշտօնատարք որք մինչեւ ցարդ ներկայ չէին գտնուած օսմ. բարձր գօմիսէրին ընդունելութեանց։ Բարձր. Խտիւն Պայրամի երկրորդ օրը Մուխթար փաշան տեսնելու գնացեր է, նոյնպէս և բրինս Հասան փաշա և խտիվական գերդաստանին միւս անդամք։

—Աւստրեւհունգար կառավարութիւնը ձեռնարկներ ըրած է ի Սոֆիա որպէս զի Պէլկրատ-Սոֆիա Կ. Պոլսոյ մեծ գիծը բացուելով, երթեւեկութիւնք սկսին ըստ կարելւոյն փութով։ Համեմատ ձեռնարկներ եղած են նաեւ սերպիական կառավարութեան քով։

—Սոֆիայէն կը գրեն թէ Ֆէրտինանտ իշխանն իւր մօր պիտի ուղեկցի այն պտոյտի պահուն զոր Քլէմանդին իշխանուհին պիտի կատարէ Վարդի Հովտին մէջ (Գըզանլըք)։ Իշխանն ու մայրը պիտի բնակին Քալօֆէրի վանքին մէջ, որ գեղազուարճ դիրք մ'ունի Պալքաններուն վրայ, հինաւուրց կաղնիներով շրջապատեալ, և ուր յատուկ բնակարաններ պատրաստուած են Ն. Բարձրութեան համար։

—Հանրային Պարտուց վարչութեան մայիս ամսոյ հասոյթք 82,694 ոսկւոյ կը հասնին. Այս գումար բաղդատելով անցեալ տարւոյ մայիս ամսոյ հասոյթին հետ, որ էր 67,411 ոսկի, Հանրային Պարտուց վարչութիւնն այս տարի 15 հազար 283 ոսկւոյ առաւել հասոյթ ունեցած է։

—Յայտնի է թէ Պ. Պէժէ դրամատեարց խումբ մը կողմէ ձեռնարկներ ըրած էր կայս. կառավարութեան մօտ՝ Ասիական երկաթուղեաց շինութեան մենաշնորհն ստանալու համար։ Արդ՝ կայս. կառավարութիւնն արտօնած է զՊ. Պէժէ երկրաչափ մը ղրկել այդ կողմերն ինչ ինչ նախնական քննութիւններ կատարելու համար։

—Ելմտական Նախարարութիւնը ծանոյց ամեն կողմ թէ ոչխարի տրոց գանձումը պէտք է կատարուի առանց յապաղման և ոչ ումեք վրայ պահանջք մնայ։

—Ի հաշիւ կայս. կառավարութեան Մավզէրի գործարանին յանձնարարեալ հրացաններէ մաս մը երէկ մայրաքաղաքս բերուեցաւ։

—Երէկ մայրաքաղաքս ժամանեց անգլիացի երկրաչափ Պ. Ճօրճ Բոլինկ որ աստի Էնկիւրիւ պիտի ուղեւորի քննութիւններ կատարելու համար Իզմիտ-Էնկիւրիւի երկաթուղւոյ գծի շինութեան մասին, որոյ մենաշնորհը կը խնդրէ դրամատեարց միջազգային խումբ մը։

—Եգիպտոսի պատերազմական նախարար Մուսթաֆա Ֆեհմի փաշա Վիեննա գնացեր է տեղւոյն երեւելի բժշկաց խորհուրդ հարցունելու համար իւր անձնական վատառողջութեան նկատմամբ։

—Պոլսոյ վերջին մեծ հրդեհէն 600 ոսկի վնաս կրած է Նորթ Պրիթիշ ընկերութիւնն որ այդքան գումարի ապահովագրած էր այն ապարանքն որ աղջկանց վարժարանի կը ծառայէր. իսկ Ռուէնէզ ընկերութիւնը 20,000 փրանքի փոխարէն ապահովագրած էր Ճաֆէր պէյի հրկիզեալ ապարանքը։

—Ոստիկանութիւնը Եորտամ անուն անձ մը ձերբակալած է որ ինչ ինչ պատճառներով մասնակցութիւն ունեցած լինիլ կը թուի Սարըեարի ծանուցեալ ոճրագործութեան մէջ։ Եորտամ այս պահուս Բերայի ոստիկանութեան բանտը կը գտնուի։

—Ֆէնէրի Պըլղուրճու սրճարանի վարձակալն Նիքօղայիտի երէկ ժամ 5 ½ին յանկարծամահ եղաւ նոյն սրճարանի մէջ նստած պահուն։

—Իրաւագիտական վարժարանի դասախօսութիւնք սկսան այս երկուշաբթի։

—Երկուշաբթի օրը ոստիկանութիւնը կամուրջին վրայ Գատըգիւղի շոգենաւուց կեցած տեղւոյն մօտ երկու քսակահատներ ձերբակալեց որք մարդու մը ժամացոյցը շորթելու կ'աշխատէին։ Նոյն օրը Եէնի Ճամիի շրջակայքն ևս տասնի չափ քսակահատներ ձերբակալուեցան։

—Ոստիկանութիւնն երէկ խումբ մը չարագործներ աքսորեց հեռաւոր վայրեր։

—Երէկ ի Պոլիս Սուլթան Մահմուտի դամբարանին մօտ մարդ մը կառքի մը անիւներուն տակ մնաց և ոտքը ճմլուեցաւ։

Նախընթաց օր եւս կամուրջին վրայ Թիֆաքէթի սպասաւորներէ ծերունի մը կառքի մը անիւներուն տակ մնաց և ծանրապէս վիրաւորեցաւ։ Ոստիկանութիւնը ձերբակալեց կառապանը։

—Հաքիքաթ, ծանուցանելէ յետոյ թէ Պէօյիւքտէրէի մէջ կոկորդի հիւանդութիւն մը երեւան ելած է ուրկից ընդհանրապէս հրեայ տղաքներ վարակուած են, ձեռնհաս իշխանութեան ուշադրութիւնը կը հրաւիրէ։ Բժիշկները վկայած են թէ այս հիւանդութիւն թաղերու անմաքուր վիճակէն առաջ եկած է։

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

ԱԺԱՆՍ ՀԱՎԱՍ

Լոնտոն, 19 յունիս.

Անգլիական լրագիրք չեն ծածկեր իրենց երկիւղներն ի մասին Վիլհէլմ կայսեր յաջորդութեան. իրենց յոյսը կը դնեն Պիզմարք իշխանին վրայ՝ պահպանելու համար Եւրոպիոյ խաղաղութիւնը։

Պուտա-Բէշթ, 19 յունիս.

Ելմտական յանձնաժողովին մէջ, Նախարարապետ կոմս Քալնոքի, հարցման մը պատասխանելով, ըսաւ թէ Աւստրիա անհրաժեշտ կը նկատէ Մակեդոնիոյ համար Թուրքիոյ կարի ներողամիտ վարչութեան շարունակումն, և թէ վաղուց անտի կը ջանայ լաւագոյն յարաբերութիւններ հաստատել ընդ մէջ Կ. Պոլսոյ և Աթէնքի։

ԴՐԱՄԱԿԱՆ

Ղալաթիա, 8 յունիս

Օսմանեան Քօնսօլիտէ

		Գաշեկան
Երէկ երեկոյ գոց. (Միաց. Ս.) Սէրի		15 21
Պօրսային գոցումէն վերջը	»	15 21
Բերայի մէջ	»	— —
Առաւօտուն բացուեցաւ	»	15 22
Բարձրագոյն գին	»	15 22
Նուազագոյն »	»	15 22
Կէս օրին	»	15 22

[illegible]

Երէկ երեկոյ	Գ. կ.	36 8
Այս առաւօտ	»	36 14
Կէս օր	»	36 16

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՂԹՈՑ

Փոխառութիւն 1858) » 1862)	Սէրի	Գ. կ.	24 10
» 1860) » 1863) » 1872)	B. »	»	14 10
» 1865) » 1869) » 1873)	C. »	»	0. 15 22

ԲԱԺՆԵՏՈՄՍՔ

Սօսիէթէ Ժէնէրալ	Անգլ. Լր.	4 16
Քրէտի Ժէնէրալ	Օսմ. »	7 24
Պանք տը [illegible]	» »	6 18
Սօս. Շանժ է Վալէօր	» »	4 15
Թըրամուէյ	» »	462 ½
Ռումէլի երկաթուղի	Ֆր.	40 75
Օպլիկասիօն տը Բրիօրիթէ	»	—
Բաժնեթղթք Լաւրիոնի	»	112

Ընթացք դրամոց

Օսմանեան ոսկի	ղրշ.	100
20 ֆրանքնոց	»	88 16
Անգլիական ոսկի	»	111 6
Բօլ Իմբէրիալ	»	90 30
Քրիմեց	»	51 17 ½
Ռուսկի թղթադրամ	»	10 25
» արծաթ	»	74
Ֆիօրին	»	— —
Մէճ. արծ. (տուրք.)	»	108 19
Վէյնոց	»	103 20
Հինգնոց	»	103 20
Մէթալիք	»	102 20
Բէշլիք	»	10 30

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 11 յունիս ժամ 5 վայր. 15 երեկոյ

Անգլ. քօնսօլիտէ (գ. կ.)	99 5/16
Օսմ. » Սէրի Գ. բացուեցաւ	14
» » » գոցուեցաւ	14 1/16
» » » Ա.	23 1/2
» » » Բ.	14 1/4
» » » Գ.	13 7/8
Օթօման 1871	83 3/4
Փոխառութիւն 1877	95 1/4
Պանք Օթօման	10 3/8
Իտալական փոխառ. 1873	95 1/2
Եգիպտական միացեալ (Ունիֆիէ)	80 1/8
» առանձն. (բրիվիլէժիէ)	100 3/4
Տայրա Սանիէ	76 3/4
Դոմէնիալ (փոխառ. [illegible]) (գ. կ.)	99 3/8
Հունգարական պարտաթուղթ 4 0/0	— —
Փոխանակութիւն Բարիզի վրայ	25 45

Վիեննա, 19 Յունիս ժամ 4 երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	126 35
Օսմանեան երկաթուղի	20 50

Բարիզ, 19 Յունիս ժամ 3 վայր. 45 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 ½ 0/0	105 97 1/2
» » 3 0/0 գ. կ.	82 72 1/2
Օսմանեան քօնսօլիտէ Սէրի Գ. բացուեցաւ	14 22 1/2
» » » գոցուեցաւ	14 25
» » » Բ.	— —
» » » Գ.	14 10
Օսմանեան երկաթուղի	40 25
» Րէժիի բաժնեթղթք	— —
Պանք Օթօման	518 75
Քրէտի Լիօնէ	591 25
» Ֆօնսիէ	1461 25
Բաժնետոմս Լիոնի	1251 25

Սուէզի ջրանցք	2173	75
Ռուսական 5 % 1877 ի	101	3/4
Իտալական Ռանթ	98	92 1/2
Սպանիական (արտաքին)	72	3/8
Եգիպտական միացեալ	406	25
Բրիօրիթէ Թիւրք	415	
5 % Չիլիական	369	37 1/2
Չէք Լոնտրայի վրայ	25	28

ԿԱՐԵՒՈՐ ԴԷՊՔԵՐ Ի ԲԱԼՈՒ

ՔԱՐԲԵՐԴ, 18 մայիս

Մեր արեւելակողմէն եկած հովերն 3-4 ամիսներէ վեր տխուր և սրտայոյզ դէպքի մը պատմութիւնը կը բերեն ամեն պահու նոր երեւոյթներով, որմէ ականջ և սիրտ չափէ աւելի ծանր տպաւորութեանց մատնըւած՝ չափէ աւելի մենք ալ համբերելու առաքինութիւն մը յարգած եղանք կարծես՝ լսուածն ու պատմուածները հրապարակ բերելու հարկը տեղացւոյն աւելի բաժին ձգելով:

Այլ զի բանը մինչեւ Քարբերդի դուռը և մինչեւ մեր առաջնորդարանն եկաւ ծայր տուաւ նոյն կողմէն՝ Բալուէն, ուր իսկ է բուն թատերավայրը, մենք ալ ուրեմն պարտաւորութեանց կարգի մը մէջ դրինք այն նկատմամբ մեր լսածն ու ստուգածները Արեւելքի ընթերցողաց պատմելու հոգը:

Բալուայ Տէվէճիկ գիւղէն, հայ ընտանիքի մը պատկանող աղջիկ մը չափահաս՝ Փարիզ անունով, իբր 3 տարի առաջ նշանուած կը լինի Խօշմաթցի երիտասարդի մը հետ, երկու կողմեան ծնողաց հաւանութեամբ եւ տղայի ու աղջկան եւս սրտի կամքութեամբ:

Երիտասարդ Խօշմաթցին յետ նշանախօսութեան կը տարակայի հայրենիքէն ի Պոլիս, կը մնայ հոն մինչեւ ի հարկէ վրայ դնել [illegible] ու [illegible], յորում յաջողելու համար երեք տարի մինչ մայրաքաղաքի պանդուխտ հայրենակիցներու հետ կը լինի: Փարիզ սակայն հեռու ինկած իր սիրական նշանածէն, այլ իր կոյս կրծոց տակ երէկուան չափ թարմ ու անաղարտ պահելով նորան սէրը, կը պահէ, կը պաշտէ եւ եռանդեայ ընթացքով՝ կը լինի ժամադիր երջանիկ օրուան, ի պսակ, ի միութիւն:

Այսպէս գեղջկուհւոյն սիրտն Աստուած անտես չըներ, Խաչատուր անցեալ աշնան մէջ հայրենի իր խոնարհ բունին մէջ կուգայ, կը դառնի, օրեր շատ չեն անցնիր, հարսանիք, հանդէս եւ գիւղի քահանային խաչովն ու պսակովն երկու տենչաւոր սրրտեր իրար գտած, իրարու ձեռք բռնած կը լինին այր եւ կին եւ մէկ մարմին:

Աղջիկն այն ինչ իր պանդուխտ նշանածի սիրովը ոգեւոր՝ կ'ապրի իր ծնողաց շուրջը, ծնողք սակայն օրիորդի սրտին ու սիրոյն համար այսպէս են ծրագրեր այն եւ անդուն խնդրանքէն ընկճեալ, որ կ'ընէ եղեր Նպչեցի երիտասարդ մը գործնական ջանքերով եւ հետամտութեամբ:

Նպչեցին նախ Փարիզի ծնողաց, ապա եւ իբր 20 ոսկւոյ գումար Առաջնորդ վարդապետի աչը ծրարելով կը խնդրէ եւ կը պահանջէ ամենայն իրաւամբ Փարիզ որպէս գիրն ստուգիւ կամ իրեն խոստացուածը իր ձեռքն ունենալ, որ տրուած է կամ նա ինքնին գնացեր է, կ'ըսէ, Խօշմաթցի Խաչիկի ի կին:

Թէոդորոս վարդապետ Տիվրիկեան ամեն եղածէն ու դեռ աւելի քան դայդ խոստացուածներէն ըրբերն յարուեանունս ի նիրհ դնելով՝ թոյլ կուտայ հարսին հետամուտին կամ աւելի ճիշդ ինքն յայտնի կարեւոր դերն ստանձնելով՝ կ'աշխատի եւ նպատակ կը դնէ զնա իւր լիաքսակ մատակարարին Փարիզ իւր անուանական էրկան՝ Նպչեցւոյն յանձնել:

Տարաբաղդ ամուսնոյ հարսնիքը չարագուշակ թուականի մը սկիզբ է եղեր, հարսն իր փեսայի կեսրանց տունը կը մնայ այնպէս ինչպէս բանտի մէջ, որմէ դուրս՝ փողոցը՝ երկաթ ձեռքեր կրնան զինք թըռչունի մը պէս Խօշմաթէն ի Նպչի թռցնել, քանի մը վայրկեանով, գիւղեր որ իրարմէ աւելի քան 45 րոպէ հեռաւորութիւն ունին:

Թէոդորոս վարդապետ այր եւ կին այս ասորձան ահի դողի մէջ պահելու համար բաւական արդէն վճռական քայլեր կատարեր է, բանադրած լինելով պսակադիր քահանան, եւ Նպչեցին յայտնի եւ համարձակ քաջալերած լինելով որ ամեն պահու Խօշմաթի փողոցներուն մէջ լրտեսեն ու սպասեն Փարիզի երեւնալուն:

Բալուի Առաջնորդը զիւր այրն իր գըլխուն թագն ու պսակը դաւանող կնոջ մը սիրտը թափանցելու անգիտութեամբ՝ կը կարծէ իր ձիուն սանձ ադուցանել երբ նոյն կնոջ պսակը լուծելու և զնա այլում յանձնելու այնպիսի բուռն ու ապօրէն ջանքեր իրարու վրայ ի գործ կը դնէ: Ցուսարեկ սակայն դեռ այդ հասարակ կերպերէն, Թէոդորոս վարդապետ կառավարական ոյժ մը ի հանդէս կը բերէ:

Այսպէս ահա ոստիկանաց խումբ մը յանձնարարուած՝ Խօշմաթ կը մտնէ, կը փնտռեն Խաչիկի կինն և Խաչիկ ինքն եւս տանիլ Առաջնորդարան ի պատասխանատւութիւն, և անոր հասկանալի է յանձնել ու ծախել որի: Գիւղացիք ոստիկանաց սպառնալեաց ու սպառնալիքներուն առաջ մինչեւ վերջ անտեղիտալի մնալով՝ ապաժեռն անոնք իրենց տեղը կը դարձնեն:

Այս վարմունք գիւղացիներու՝ վարդապետի ձեռքը կը դառնայ շնորհքով լախտ մը, որով կը յաջողի զԽօշմաթցիս կառավարութեան ընդդիմացողներու յանցանքով՝ անոնցմէ իբր 60 հոգի բանտ լցնել տալ, և՝ 60 հոգիէն ապա զտելով զննելով 14 հոգին որոց՝ գլխաւոր յանցաւորներ, Մատէն կը ղրկուին:

Ոչ Մատէն կը ղրկուին, հոն անոնք անճարացած ու անպաշտպան կը նետուին ի բանտ, քաւելու ու սրբելու Թէոդորոս վարդապետի ընդդէմ գործած մեղքերնին: Եւ այս բանտարկեալք ահա ազատելու բանտէն ու լոյս աշխարհ տեսնելու համար մինչեւ հիմա աւելի քան 100 ոսկւոյ գումար մը ծախսած ու դեռ չեն ազատեր:

Խաչիկ վախնալով թէ՝ փորձանք մ'ալ վերջապէս իր գլխուն կրնան բերել՝ գիւղացւոց ձերբակալելու օրն նա արդէն Պոլիս մեկնած կը լինի. և՝ Խօշմաթցիք եւս հաւատքն յանկարելիութեան զգալու տագնապալից վիճակաւ թէ՝ իրենց Առաջնորդն աւելին դեռ չափէ ընէ բրած ու մնասածներէն, 150 ստորագրութեամբ դաւանագիր մը կը պատրաստեն և կը պատրաստուին ամբողջ գեղով Փէրապայծառի եկեղեցին ընդունիլ:

Մեծ Պահոց մէջ էր, Խօշմաթցիներէ պատգամաւորութիւն մը նոյն թուղթը ծոցերնին Քարբերդ կուգան և բարեկամաց ու ծանօթներու շրջանակի մը մէջ կը տարաձայնեն առաջադրեալ խորհուրդը ակամայ հարկի մը ներքեւ:

Զայս այսպէս կը լսէ և Շիշմանեան Սըրբազան, Խօշմաթցիք Առաջնորդարան իրեն կանչելով ընդ որս կը լինի և Փարիզ. խօսեցնելով զայս և յորդորելով զայնս իրենց տեղը դառնալու համար, կը խոստանայ Սըրբազան ինքն եւս որպէս զի խնդիրն ամենայն հնարիւ Պատրիարքարանի լսեցնէ, Փարիզ իր Խաչիկի տունը մնայ և գիւղացիք իրենց եկեղեցին:

Կը դառնան տեղերնին Խօշմաթցիք, Փարիզ հետերնին. Թէոդորոս վարդապետ սակայն դարձած չլինիր եղեր յուղղախոհութիւն, հետամուտ դարձեալ որ դժբաղդ ճակն ուրանայ զԽաչիկ և դաւանի միայն Նպչեցին: Երեք ամիս Խաչիկի կին եղող Փարիզ մայր դարձած յայտնի՝ երկրորդ անգամ ինքզինք Քարբերդի Առաջնորդարանը կը նետէ, և այս անգամ յուսահատի մը վերջին ճիգերով Ն. Սրբազնութեան քղանցքներուն կը կառչի, որպէս զի փրկաբար տնօրինութիւն մ'ընէ, ևթէ ոչ . . . .

ՓԱՌՆԱԿ

ԿԱՒԿԱՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են, որ դերասան Պ. Ադամեան, մի քանի ժամանակ Մոսկվայում մնալուց, եւ գուցէ Պետերբուրգ գնալուց յետոյ, պէտք է ուղեւորվի Կ. Պոլիս, որտեղից նա գուցէ կանցնի Եւրոպա, մի քանի նշանաւոր քաղաքներում ներկայացումներ տալու նպատակով:

—Մեզ գրում են ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ հետեւեալը. «Մայրաքաղաքի մի խումբ հայ երիտասարդներ, ուշ իմանալով Րաֆֆի մահը, չը կարողացան իր ժամանակին մեր վիպասանի դագաղի վրայ պսակ դնել, ուստի նրանք վճռեցին այժմ Րաֆֆիի գերեզմանին վրա արձան կանգնեցնելու համար իրանց մէջ գումար հանգանակել»:

—ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ մեզ գրում են, «Տեղիս երկսեռ դպրոցների ուսուցիչներն ու վարժուհիները, յարգելով հանգուցեալ վիպասան Րաֆֆի գործունէութիւնը, հանգանակութիւն արին թէ իրանց մէջ և թէ բարձր դասատուների աշակերտների ու աշակերտուհիների մէջ և հաւաքեցին 32 ր. 91 կոպ., որ գումարից ծախսելով հեռագրի, հոգեհանգստի և փոստի ծախսի վրա ընդամենը 15 ր. 70 կ. մնացած 17 ր. 21 կոպ. ուղարկում են «Մշակի» խմբագրութեանը, Րաֆֆի հեղինակութիւնները տպագրելու գործի համար»:

—Ռուսկի Կուրիէր լրագրի 136 թւի մէջ տպվեցաւ մի շատ համակրական թըղթակցութիւն Վաղարշապատից հանգուցեալ Րաֆֆիի մասին: Թղթակիցը խօսում է Րաֆֆիի նշանակութեան մասին, որպէս գրողի, և վերջը նկարագրում է նրա թաղման հանդէսը:

—Նոր-Բայազէտից մեզ գրում են, որ այնտեղ մտադրութիւն կայ հանգանակութիւն բանալու յօգուտ Րաֆֆիի արձանի: Դրա հետ միասին մեր թղթակիցը յայտնում է, որ այնտեղի ընթերցող հասարակութիւնը շատ ցաւում է, որ ուշ տեղեկութիւն ստանալու պատճառով, անկարող եղաւ իր կողմից եւս պսակ դնելու հանգուցեալ գրողի դագաղի վրայ:

—Հաստատ աղբիւրներից լսում ենք, որ առաջիկայ հինգշաբթի, համբարձման օրին, Խօջիվանքի գերեզմանատանը հանգուցեալ Րաֆֆի գերեզմանի վրայ կը կատարվի հանդիսաւոր հոգեհանգիստ:

—Անգլիայի Մանչեստր քաղաքից մեզ գրում են, որ այնտեղի հայոց մատուռի մէջ հոգեհանգիստ է կատարել Րաֆֆիի յիշատակին: Դորա հետ միասին Մանչեստրի գաղթականութիւնը մեզ փող է ուղարկել և պատուիրել է մի պսակ դնել իր կողմից հանգուցեալ վիպասանի գերեզմանի վրա:

—Ինչպէս երեւում է արտասահմանի հայոց մի լրագրի ստացած տեղեկութիւններից, Լոնդոնում հայերը հոգեհանգիստ են կատարել հանգուցեալ Րաֆֆիի յիշատակին:

—Տեղական ռուս լրագիրները հաղորդում են, որ Գանձակի րէալական դպրոցի ուսուցիչ Տէր-Միքայէլեան, որ վերջին ժամանակ բնակվում էր Թիֆլիսի «Վենեցիա» հիւրանոցում, մայիսի 22-ին անձնասպանութիւն գործեց այդ հիւրանոցի սենեակներից մինում:

—Մայիսի 22-ին Թիֆլիսի Միքայէլեան կամուրջի մօտ գտնվող «Վենեցիա» հիւրանոցում անձնասպանութեամբ վախճանված Գանձակի րէալական դպրոցի ուսուցիչ Տէր-Միքայէլեան թողել է մի քանի նամակներ զանազան անձանց անունով, որոնց մէջ յայտնում է, որ ոչ ոքի չը մեղադրեն իր սպանութեան համար: Նամակներում անձնասպանը ասում է որ կեանքը զզուելի է դարձել իրան համար: Անձնասպանութեան գլխաւոր պատճառը առայժմ յայտնի չէ, թէեւ շատ ենթադրութիւններ կան:

—ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ ստացանք հետեւեալ լուրը. «Մայիսի 23-ին, երեկոյեան ժամը 7-ին վախճանվեցաւ Ալէքսանդրոպոլում հայ-կաթոլիկ վարդապետ, գերապատիւ Ալէքսանդր Արարատեան: Հանգուցեալը յայտնի էր, որպէս հայասէր վարդապետ, բայց սրանից գուցէ շատերը չը գիտեն, որ նա է «Անի քաղաք» հռչակաւոր և հայերի մէջ ամեն տեղ տարածված երգի հեղինակը»:

—Երեքշաբթի, մայիսի 24-ին, առաւօտեան 10 ժամին, Կուր գետը սկսեց սաստիկ բարձրանալ: Ջուրը հետզհետէ բարձրանում էր մինչեւ ժամի 3-ը: Գետի հոսանքը բերում էր գերաններ, տնակներ, ջաղացներ, զանազան քանդված իրեղէններ, որոնց ինչ լինելը չէր իմացվում: Թիֆլիսի Սաղ ասված քաղաքամասը բոլորովին ծածկվեցաւ ջրով, տները մինչեւ կէսը թաղված էին ջրի տակ, բնակիչները բարձրացել էին տների կտուրների վրա, փողոցներում նաւակներով էին շրջում: Ջուրը կատարելապէս ծածկել էր Մուշտայիդ այգու դիմացի ամբողջ ափը իր այգիներով, ծածկել էր Նաբերէժնայա ասված փողոցը, այնուհետեւ հասել էր մինչեւ այն փողոցը, որի վրայով երթեւեկում է Հալաբար գնացող ձիաքարշ երկաթուղին: Ձիաքարշը այլ եւս չէր բանում: Կուր գետի ափում գտնվող բոլոր տները կիսով չափ ծածկված էին ջրով, փոքրիկ տնակները կատարելապէս խորասուզվեցան ջրի մէջ: Միքայէլեան կամուրջի և մօտակայ փողոցների վրա, նոյնպէս և Վանքի աւագ-եկեղեցու բակում գետի ափերում գտնվող տների պատուհաններում ու բալկոններում՝ հանդիսականների թիւը անհագին էր: Ոստիկանութիւնը շրջում էր Սաղում և զգուշացնում էր բնակիչներին: Ժամի մէկից քառորդ անց, կառավարչապետ, իշխան Դոնդուկով-Կորսակով այցելեց Սաղ ասված քաղաքամասը: Ջուրը շարունակում էր աւելանալ: Ժամի 2 1/2-ին դարձեալ մի ջաղաց անցկացաւ գետի հոսանքով, դիպաւ Հալաբարի կամուրջին և փշրվեց: Ջուրը հետզհետէ աւելանում էր մինչեւ 5 ժամ, իսկ այնուհետեւ սկսեց պակասել: Ասում են որ Կուր գետը ջրի այդ բարձրութեամբ 10 տարուց աւելի է որ հասած չէր: Ջրի կատաղի հոսանքի տեսարանը սարսափ էր ներշնչում:

—Երեւանից մեզ գրում են. «Վերջին շաբաթները մեզանում եկած յորդ անձրեւների հետեւանքն այն եղաւ, որ ինչպէս հաղորդում են Երեւանի նահանգի բազմաթիւ գիւղերից, արտերը շատ տեղ կատարելապէս հեղեղվել են և ցանքերն էլ շատ տեղ խսպառ փչացել են»: (Մշ.)

ՆԱՒԹԱՀԱՆՔ ԹՈՒՐՔԻՈՅ

Հասարակութեան ծանօթացնելէ առաջ Թուրքիոյ Նաւթային աղբիւրներն, հարկ կը համարիմ մի քանի խօսքով բացատրել Նաւթահանքաց տեսակներն և յատկութիւնն, զորս գիտնալ անհրաժեշտ է լաւ և որոշ ըմբռնելու համար ինչ որ առաջադրած ենք: Կուպրներն (bitumes), նման իւղերու և բուսեղէն ռետիններու, բոցավառ և իրենց յատուկ հոտով մը կ'այրին. գլխաւորաբար երկու տեսակք կ'որոշին, մին հեղուկ՝ Նաւթ (naphte) կամ քարիւղ (petrole), բաց դեղին կամ սեւագոյն, որոյ աղբիւրները կը գտնուին այլ և այլ երկրի մէջ և զոր կը գործածեն իբր իւղ կանթեղի. միւսն՝ թանձր և սեւ կպրաձիւթ (asphalte) որ ընդհանրապէս մի քանի լճաց երեսն կը գտնուի, ի մէջ այլոց կպրաձիւթական (asphaltite) լըճին կամ Մեռեալ ծովուն, Յուդայի երկրին մէջ: Կուպրներն ընդհանրապէս կը գործածուին իւղոտելու մեքենայից գործիներն և կառաց լծեռաններն, պատրաստելու մածուցիկ նիւթեր, տաքցնելու չոգեշարժ մեքենայից կաթսաներն, և այլն, որք թէեւ ի հնումն ծանօթ, մօտ ժամանակիս մէջ սկսան գործադրուիլ աւելի յաջող և արդիւնաւոր կերպիւ. Նոյնպէս իբր իւղ լուսաւորութեան տանց և այլ պիտոյից, հազիւ 27 տարի է—գրեթէ 1861էն ի վեր—որ սկսաւ ընդհանրանալ մեծաւ մասամբ:

Նաւթահանք մը, որ առաջին անգամ Ամերիկայի Բանսիլվանիոյ նահանգին մէջ 1859ին երեւան ելաւ, կարենալ չահագործելու համար պէտք է բանալ հորեր առաւել կամ նուազ խորութեամբ ըստ տեղւոյն, և ահա այս պատճառաւ Նաւթային աղբիւրներ կամ հորեր կը կոչուին այն տեղերն ուր աշխատութիւնը կը կատարուի: Նաւթային հորերն, ըստ երկրաբանութեան, կը պատկանին նախնական շրջանի ածխաբեր կազմութեան առաջին մասին, ուր, որպէս ծանօթ է, ածխաթթուի քանակութիւնը, շնորհիւ առատ բուսոց, անհամեմատ ընդարձակ տեղ մը կը գրաւեն: Ծառակերպ պըտերք (fougères), հսկայ կոնաբերք (conifères), բարձր արմաւենիք, որոց մնացորդք կամ բրածոյք առատօրէն կը գտնուին ամեն երկրի ածխաբեր կազմութեանց մէջ՝ ծնունդ տուած են նաւթահանքաց որպէս հանքածոյ:

Թուրքիոյ մէջ, որպէս իւր առատ ազգի ազգի հանքերն կը ցուցնեն, կան հին կազմութեանց պատկանող գետիններ և իւր ընդարձակութեան մէջ ուշագրութեան կէտեր զորս կը ներկայացնեմ ընթերցողաց ի նկատառումն, թուելով Նաւթահանքաց մի քանիներն որք են,

1. Պարսկական սահմանագլխոյն վըրայ, Պաղտատի արեւելեան կողմը, Մէնտէլի գիւղէն 7 ժամ հեռաւորութեամբ, 30ի չափ Նաւթահանքաց հորեր կան: Տեղացիք՝ մի քանի մեդր խորութեամբ աւազաններ բանալով այդ հորերու շուրջն, 3—4 օրը մի անգամ կը ժողովեն և պարկերու մէջ դնելով Մէնտէլի կը փոխադրեն ծախելու համար: Տարեկան անզուտ քանակութիւնը կը հասնի մօտաւորապէս 170,000—200,000 քիլօի որոց 38 առ 100 զուտ քարիւղ և մնացեալն այլայլ քանակութեամբ օտար նիւթեր են: Հաշիւ ըրելով տեսնուած է թէ մէն մի քիլօի համար ծախք կը լինի 0,50 փր. Զուտ քարիւղը Պաղտատ տանելով կը ծախեն, իսկ խառն կամ անզուտը բնիկները կը գործածեն իրենց առտնին պիտոյից: Որպէս վերեւ տեսնուեցաւ, նոյն իսկ այս վիճակին մէջ դարձեալ չահաւոր է, բայց եթէ գիտութեան ընձեռած միջոցները, փոխադրութեան ծախուց և զտարանի դիւրութիւններն և առաւելութիւններն ի կիր առնուին, թէ՛ արտադրութեան քանակութիւնն և թէ շահն՝ համեմատաբար՝ առաւել կը լինին:

2. Պաղտատի հիւսիսային կողմը, 40 ժամ հեռաւորութեամբ, Քէֆրի և Թուզխուրմայի գիւղերու մօտ տասնչորս քարիւղի աղբիւրներ կան նոյնպէս, որք հարստութեան մասին կրնան մըրցիլ Ամերիկայի և այլ տեղեաց քարիւղի հանքաց հետ և մեծ շահ արտադրելու վիճակի մը մէջ կը գտնուին եթէ գիտութեան նորագոյն դիւրութիւններն և ծանօթութիւններն ի կիր առնուին:

3. Հալէպի նահանգին Իսկէնտէրուն գաւառին Չէնկէն գիւղի մօտ, վերջին ժամանակներս քարիւղի ընդարձակ գետիններ երեւան ելած են: Պաշտօնական տեղեկագրէն և տեղական քարտէզէն կ'իմանանք թէ խիստ չահաւոր և առատ քարիւղի հանք մ'է՝ որոյ կայսերական հրամանն ստացած է Աչմէտ-Նէճաթի էֆէնտի ի չահագործութիւն: Ըստ տեղեկագրոյն զոր ընդարձակ քարտիսիւ մը մատոյց առ հանքաց վարչութիւնն հազարապետ Եուսուֆ Զիյա էֆէնտի՝ Բարիզի հանքային վարժարանի վկայեալ աշակերտն և այժմ պաշտօնեայ, այս քարիւղի հանքը կը պարունակէ 39—44 առ 100 և փոխադրութեան բացառիկ դիւրութիւն մը ունի, հազիւ 18 ժամ հեռի Իսկէնտէրունի նաւահանգստէն:

4. Տրապիզոնի շրջականները նոյնպէս քարիւղի հետքեր կան: Տեսնուած է որ ծովուն մի կողմն քարիւղի աղբիւրներ կան որ հաւանականաբար կը կարծուին ըլլալ Պաթումի քարիւղի հանքաց մի մասն որ, ինչպէս յայտ է է, կրնայ ամեն կերպիւ գոհացուցիչ լինել եթէ խուզարկութեան փորձեր կատարուին: Կոմս տը Ռուզէն, ծանօթ երկրաչափն, որ Տրապիզոնի նահանգն բազում տարիներ մնացած և խուզարկութեան բովէն անցուցած է, կը պատմէ թէ «անգամ մը երբ Վիճէյի մօտէն կ'անցնէի, հոտն ուշադրութիւնս գրաւեց և դէպի ծովեզերը յառաջանալով տեսայ որ ծովուն ջուրն, անչարժ, իւղոյ խաւով մը պատուած է: Շատ մտածելէ եւ հետաքրքրուելէ վերջ յանգեցայ սա գաղափարին թէ կուպրի խաւեր կան ծովուն տակն և այս իւղն յառաջ եկած է անկէ: Մի քանի մէդր ծովեզերը փորել տուի և տեսայ որ հետզհետէ կուպրի նշաններն սկսան երեւան գալ»: Կարեւոր լուր արժանի ուշադրութեան:

5. Ասորեստանի մէջ կան շատ մը Նաւթային հորեր որոց նշանաւորագոյնն են, շատ հին ատեններէ ի վեր ծանօթ, Հիթի հորերն և կը գտնուին հնոյն Պալմիրի աւերակաց մօտերն Եփրատի ափանց վրայ: Այս Նաւթային հորերը, նման այլ Նաւթային աղբիւրներու, ծծմբային չոգւով խառն աղի ջրեր կը ժայթքեն: Այս ջրերն առատ են և տեղացիք աւազաններու մէջ ժողովելով տարին 120000 քիլօ մաքուր աղ կ'արտադրեն: Հիթի տարեկան արտադրութիւնն 1 միլիոն քիլօ նաւթի կը հասնի և զորս տեղացիք կը վաճառեն բաւական բարձր գնով Պաղտատի հրապարակը:

6. Մուսուլի հարաւային կողմն, Տիալա գետոյն ափանց վրայ, 7-8 Նաւթային հորեր կան թէև բայց չեն չահագործուիր: Այս նաւթերը խիստ մաքուր և զուտ լինելով քիչ քանակութեամբ ծծմբի հետ խառն են: Նոյնպէս այս գետոյն ձախ կողմն և փոքր Թիւրապ գետոյն հետ միացած տեղէն 6 ժամ հեռի լերան ստորոտը կան մի քանի Նաւթային հորեր որք անխնամ վիճակի մէջ կը գտուին այժմ:

7. Վանայ Արճէչ գաւառին մօտ կան ընդարձակ տարածութեամբ Նաւթային գետիններ որք՝ ըստ գիտնոց հմտագոյն կարծեաց՝ խիստ հարուստ են և չահագործման խիստ յաջող հաւանականութիւն կ'ընծայեն: Տեղացիք կամ օտարք երբեմն օգտած են այլևայլ ժամանակաց մէջ, բայց աւելի խարխափմամբ քան որոշ և հաստատուն ձեռնարկութեամբ. . . . Բնութեան երակներն աւելի չահեկան է կրկտել և բաժել քան մարդոց երակներն որք արդէն ժամակէն բերմամբը վաղ քան զկազմութիւն, բաժեալ և չորցած են. (*)

Ահա երակներն, առատ կենսական արեամբ, որք կը հոսին և կը ժայթքեն բարիք և երջանկութիւն միանգամայն անոնց որք կը մտնեն անվեհեր և հաստատ կամօք:

Թուրքիոյ Նաւթահանքաց ցանկը ներկայացնել ճշդիւ թէև անկարելի է, բայց գէթ ցարդ եղածներն ընտրանօք նշանակեցինք և դեռ, բաց ի ապագայ գիւտերէն, կան նաեւ Եանինայի Պէրաթ գաւառին Օյօնիյէ (**) գիւղին Սիլինճէ ագարակին մօտերը կպրաձիւթի աղբիւրներ՝ զորս չահագործելու հրաման տրուած է ժամանակ առաջ, նոյնպէս Մանասթըր եայլն տեղերն՝ որք կը մնան դեռ անչահագործեալ:

Գաղափար մը տալու համար Նաւթահանքաց աշխատութեանց վրայ, բաւ կը համարիմ յիշել սատ մին այդ հանքաց: Երբ առաջին անգամ երեւան եկան Նաւթահանք Ամերիկայի, տեղացիք իրարու քով, մէկզմէկէ 2 - 3,5 մէդր հեռի, շատ հորեր կը փորէին և երկրէն խաւերէն թորած նաւթերը դոյլերով կ'առնէին. բայց տեսան որ այս կերպով չէին կրնար մեծ քանակութեամբ արտադրել, սկսան հորերուն մէջ աջ ու ձախ նըրբուղիներ բանալ որով աւելի շատ արդիւնք ձեռք կը բերէին, բայց այս ալ իրենց պիտոյից չբաւելով սկսան աւելի խորունկ հորեր բանալ, 18 - 23 մէդր, և այս կերպով արտադրութիւնն սկըսաւ աւելնալ, այնպէս որ օրն 150 լիտր նաւթ սկսան ստանալ, այսինքն մէկ տակառաչափէ քիչ մ'աւելի: Բաւականալ այս յաջողութենէն սկսան հորերը չատցնել և խորունկցնել, 80 - 100 մէդրի չափ խորունկ հորեր պատրաստեցին և տեսան որ խորունկութեան հետ արտադրութիւնն ալ սկսաւ բազմանալ: Վերջապէս 200 մէդր խոր հորեր ունեցան և հոն նաւթային լճեր կոչուելու արժանի հոր մը գտան:

Այս յաջողութեան վրայ հորերու գիններն սկսան բարձրանալ, այնպէս որ մէկ արտավար գետինն որ 1861ին կարժէր, միջին հաշուով, 10-15 տոլար այսինքն 80 փր. 132000 փր.ի բարձրացաւ 1866ի մէջ: Առաւել քան 1760 Նաւթաչահագործական ընկերութիւնք կան այժմ պատկառելի դրամագլխովք: Այն տեղն ուր ամենէ առատ քարիւղ (huile de pierre) կայ, կը կոչուի այժմ Petrolie Բէնսիլվանիոյ մէջ: Հաշիւ եղած է թէ 200 մէդր խորութեամբ հոր մը ծախքն է 25000 փր. այսինքն մէն մի մէդրի համար 125 փր. գրեթէ 5 օսմ. ոսկի: Արտադրութեան հետ բաղդատելով խիստ չնչին է այս գումարն: Բացուած հորերու տրամագիծն է 0,35 0,45 մէդր: Ամենէն առատ Նաւթերն ընդհանրապէս 160 200 մէդր խորութեամբ գետինները կը գտնուին որպէս և մեր հաշիւը կը ցուցնէ: Ամերիկեան կառավարութիւնը, մէն մի տակառաչափի համար, կ'առնայ 5,05 փր. որ եթէ միայն Բէնսիլվանիոյ Նաւթահանքաց համար լինի՝ դարձեալ խիստ կլորիկ գումար մը կը ներկայացնէ՝ զի 30,000,000 տակառաչափի զուտ արտադրութիւնը կը լինին տարեկան և կառավարութիւնն, իբր տուրք, կ'ստանայ 151,500,000 փրանք:

Ընկերութիւնք որք 28 տարիէ ի վեր կը չահագործեն խիստ յաջող պայմանաց մէջ՝ մեծապէս օգտուած են նաւթահանքերէն և այս օգուտ երկին բարիք արտադրած է. մէկ կողմանէ գործաւորաց կենաց պէտքերը մատակարարած և միւս կողմանէ միլիոնատէրեր յարուցած է յԱմերիկա, ուր առաւել քան երբէք եռանդ և աշխոյժ կը տիրեն հանքաչահագործական աշխատութեանց մէջ: Տարակոյս չկայ որ այս աշխատութիւնք լիուլի վարձատրուած են և տոլարներու քանակութիւնք քան զչափն անցեալ զանցեալ են:

Թուրքիաբնակք մաղթենք որ այդպիսի աշխատութեանց սկզբնաւորութիւն մը լինի և վայելենք օգուտն չահագործելով Թուրքիոյ հանքերը:

Մ. Ս. ԵԿԵՆԵԱՆ

Հանքաբան-Երկրաչափ

(*) Վաշխառուք, փոխանակ խեղճ գիւղացւոց երակը քամելու ապօրէն փոխատըրութեամբ, աւելի չահաւոր և մարդասիրական գործ մ'ըրած կը լինին եթէ ջանան քամել բնութեան երակներն որք քան զմարդիկ անհամեմատ լաւ կը վարձատրեն:

(**) Գիտական աշխատութիւնք կը հաստատեն թէ այս հանքին խաւերն են 10-15 մէդր լայնութեամբ, արտադրութիւնն առատ և մաքուր, հազիւ 15 առ հարիւր համեմատութեամբ օտար նիւթ կը պարունակէ: Առաջ կառավարութիւնը կը չահագործէր բայց յետոյ յանձնեց ընկերութեան մը:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ԱՐԻԿԵԱՆ ՄԻՀՐԱՆ ԷՖԷՆՏԻԻ

1. Իլմիէի Կիլլէթիմէի մուհարրէրաթը րէսմիյէ վէ զայրը րէսմիյէ. գին 6 ղրշ.
2. Ճէրիտէի մէքեամիթիլ. գին 100 փրյ.
3. Րէհպէրի Թերճէմէ » 100 փրյ.

1—3

ՏՕՔԹԷՕՐ ՏԱՏՈՒՐ

ՄԱՍՆԱԳԷՏ կնոջաց, տղայոց, քիթի, բերանի և վիզի ամեն տեսակ հիւանդութեանց, ՎԿԱՅԵԱԼ Փարիզի, Լոնտրայի և Վիէննայի նշանաւոր մասնագէտ դասատուներէ, ՓՈՐՁԱՌՈՒ Եւրոպիոյ երեւելի հիւանդանոցներու մէջ ունեցած աշխատասիրութեամբ, Մայրաքաղաքս վերադարձած լինելով, իւր բնակութիւնն հաստատած է ի Մեծ փողոց Բերայի, Թիւ 447 տունը, կից Ռուսիոյ Դեսպանատան, ուր ամեն օր կ'ընդունի իւրն դիմողներն առաւօտեան ժամ 9էն մինչեւ կէսօր և կիրակիներէ զատ ամեն օր ժամ 2է մինչեւ 5 (ը. ե.) Պոլսոյ կողմը, Պաղչէ-Գափու, Համամի-Ջատտէ, Թիւրպէին դիմաց, Թիւ 8, ուր չորեքշաբթի օրերը ձրի կը դարմանէ: 7179

ԻՆՔԶԻՆՔԴ ԲՈՒԺԷԼԴ

Շատ դիւրին է, շնորհիւ Մաթթէյի էլէքտրական-նմանաբուժական դեղերուն որք մասնաւորապէս պատրաստուած են: Յիշենք միայն անոնցմէ մի քանին.

Դեղեր ընդդէմ արեան ապականութեան և ընդհանուր տկարութեան:
Դեղեր ընդդէմ արեան հիւանդութեանց, խոցի:
Դեղեր ընդդէմ Յօդացաւերու:
Դեղեր ընդդէմ Տենդերու:
Դեղեր ընդդէմ Պռոնչիդի, Թոքախտի:
Դեղեր ընդդէմ Որդերու:
Դեղեր ընդդէմ Քօլէրայի, Թունչքի, Լուծի:
Դեղեր ընդդէմ Մորթի հիւանդութեանց եւն. եւն.

Այս բոլոր հեղուկ դեղերը շիշերու մէջ պատրաստ կը գտնուին գրպանի գործածութեան համար, ի գին 10 ղրուշի, և 100 դեղահատներով տուփերու մէջ ներքին գործածութեան համար, ի գին 5 ղրուշ: Այս դեղահատներն այնքան նուրբ և ախորժահամ են որ մարդ առանց զզալու կը կլլէ զայնս:

Միակ կեդրոնատեղին է Դեղագործական Մթերանոցն, 35, Գալաթիոյ Մեծ փողոց, Քարաքէօյ:

1814 1—4

ԻԼԱՆ

ՇԷՀՐ ԷՄԱՆԷԹԻ

Մէրքէզը Էմանէթ վէ տէվաիրը Պէլէտիյէ իլէ խասթախանէլէր վէ պիմարխանէ իչիւն իւչ եա տէօրթ սէնէյին մահսուսէն վէ չէրայիթինէ թէվֆիգէն միւպայաասընա լիւզում կէօրիւնէն մալիւմ էլ միգտար համթապ վէ քէօմիւրիւն միւնագասասը պիլ իճրա գարարը գաթիսի հազիրանըն եիրմի բէշինճի չարշէնպէ կիւնիւ վիրիլէճէկինտէն, պունլարը իւմտայա թալիպ օլանլարըն հէվմը մէզքիւրէ գատար բէֆիլէրի իլէ պէրապէր Շէհր Էմանէթի մէճլիսինէ միւրաճաաթ իմէլէրի իլան օլունուր.

7 հազիրան 304 1846

1—2

ԻԼԱՆ

ՇԷՀՐ ԷՄԱՆԷԹԻ

Տօլմապաղչէ կազխանէսինէ մուգթազի մալիւմ էլ միգտար բէքթօրէթ վէ ամէլ Թուզլասը վէ սէրայի իլէ սաճլարըն միւպայաասը ղըմնընտա միւնագասասը տէրուհտէ օլունան հազիրանըն օն պէշինճի չարշէնպէ կիւնիւ գարարը գաթիսի վիրիլէճէկինտէն, իթալիպ թալիպ օլանլարըն Շէհր Էմանէթի մէճլիսինէ կէլմէլէրի իլան օլունուր.

7 հազիրան 304 1847

ԻԼԱՆ

ՇԷՀՐ ԷՄԱՆԷԹԻ

Ճիսըր ճէտիտին Սթանպօլ ճիհէթինտէ միւճէտտէտէն ինշա օլունան իքի պապ տիւքքեան իլէ Ղալաթա ճիհէթինտէ պիր պապ Թիւթիւնճիւ վէ սարրաֆ տիւքքեանըընը պիր սէնէլիք իճարը չէրայիթը լազըմէ իլէ օթուզ պիր պին ղուրուշտա թալիպի էօհտէսինտէ օլտուղունտան վէ հազիրանըն օն իւչիւնճիւ բազար իրթէսի կիւնիւ գարարը գաթիսի վիրիլէճէկինտէն, զամ իլէ թալիպ օլանլարըն հէվմը մէզքիւրէ գատար Թէէմինաթ ագչէլէրի իլէ պէրապէր Շէհր Էմանէթի մէճլիսինէ միւրաճաաթ իլէմէլէրի իլան օլունուր.

7 հազիրան 304 1848

Տէրսաատէթ պիտայէթ մահքէմէսի իքինճի ճէզա տաիրէսի [illegible] տէօրթ սէնէսի չէհրը հազիրանը [illegible] ղընտան իթիպարէն էյեամը թաթիլէ թէսատիւֆ [illegible] մատտէ հէր կիւն մահքէմէլէրը մուամէլէ [illegible] պիր սաաթ մուվազզէֆ [illegible] խիւլէ իլէ իթիպար օլընոր պէլլի մուհաքէմէլէր միւպաշէրէթ օլընաճաղը իլան օլունուր.

7 հազիրան 304 1857

ԻԼԱՆ

ՊԱՊԸ ՍԷՐԱՍՔԷՐԻ

Ճիւնուտը ճէնապը միւլքիյէնէ մուայէնաթը իչիւն միւպայեա օլունաճաղը իչիւն գըլըճ յաղմըն իթասընա թալիպ օլան վէ չէրայիթինի անլամագ իսթէյէնլէրին իչիւն հազիրանը բուլմինին օն պէշինէ գատար հէր կիւն մագամը սէրասքէրի լէվազըմաթ տաիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր.

8 հազիրան 1888 1782

Նօ. 15 1—3

ԻԼԱՆ

ՊԱՊԸ ՍԷՐԱՍՔԷՐԻ

Երզադ անպարլարը իչիւն միւպայեա օլունաճագ օլան սէքիզ օն պին քիլօ զէյթուն եաղընըն հազիրանը բուլմինին օն իւչինճի բազար իրթէսի կիւնիւ պիլ միւնագասա գարարը գաթիսի վիրիլէճէկին իթասընա թալիպ օլանլարըն մագամը սէրասքէրի լէվազըմաթ տաիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր.

8 հազիրան 1888 1783

Նօ. 16 1—3

PHŒNIX FIRE OFFICE

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՈՅԹ Անգլ. Ոսկի 1.000.000

„ՖԻՆԻՔՍ„

Հիմնեալ ի Լոնտոն յամին 1782

ՖԻՆԻՔՍ, հիմնեալ առաւել քան մի դար յառաջ, սոսկ հրդեհի ապահովագրութեան ընկերութիւն մ'է որոյ բաժնետէրք Անգլիոյ ամենահարուստ և համբաւաւոր դրամատէրներ են՝ ունենալով անսահման պատասխանատուութիւն:

ՖԻՆԻՔՍ ընկերութեան աշխարհահռչակ առատաձեռնութեան մի գլխաւոր ապացոյցն է 16,000,000 Անգլ. ոսկւոյ գումարն զոր յարդ վճարած է հրդեհի վնասուց համար: 1799

ՖԻՆԻՔՍ ընկերութիւնն կ'ապահովագրէ ընդդէմ հրդեհի և կայծակի՝ կալուածք, կարասիք և ապրանք՝ յոյժ նպաստաւոր պայմանօք և մեղմագութեամբ առաջարկելոց, որք ունիմք լիագոյն խմտանութիւն կը լրագրեն անմիջապէս մեր ապահովագրելոց կրած վնասներն:

Հ. ՍԻԻՍՆ և ԸՆԿ. միակ գործակալք ի Պոլիս և ի Շրջակայս

Թիւ 12, Սանտալճը խան, Ղալաթիա, Աւստրիական թղթատան վերեւ:

ԻԼԱՆ

ՊԱՊԸ ՍԸՐԱՍՔԵՐԻ

Հայվանաթը միրիէ 'իչիւն միւպայեաասը մէվքըի միւնագասայա գօնուլան սէքսէն պին ճէտիտ գանթար սաման իշպու հազիրանը րումինին սէքիզինճի չարշէնպիհ կիւնիւ պիլ միւնագասա գարարը գաթիսի միրիլէճէկլէրտէն վէ իրթեսի կիւնիւ տախի թէգարրիւր իտէճէք ֆիյաթըընտան ևուզտէ պէշ թէնզիլի գապուլ օլունաճաղընտան, իթալէ թալիպ օլանլարըն մագամը Սէրասքէրի լէվազըմաթ տաիրեսինէ կէլմէլէրի իլան օլունուր.

2 հազիրան 304 — 1780

Նօ. 12 — 3—3

ԻԼԱՆ

ՊԱՊԸ ՍԸՐԱՍՔԵՐԻ

Ճիւնուտը ճէնապը Միւլուքանէ իչիւն միւպայեաասը մէվքըի միւնագասայա գօնուլան լահմըն իթասընա թալիպ օլանլարըն վէ չերաիթինի անլամագ խըթէյլէրին իշպու հազիրանը րումինին տօգուզընճը կիւնիւնէ գատար հէր կիւն մագամը Սէրասքէրի լէվազըմաթ տաիրեսինէ կէլմէլէրի իլան օլունուր.

2 հազիրան 304 — 1781

Նօ. 13 — 3—3

ԻԼԱՆ

ՊԱՊԸ ՖԷԹՎԱՐԷՆԱՀԻ

Տէրտէսթը Թամիր օլան Պապը Ֆէթվա տէվայիրի իչիւն միւպայեաասընա լիւզում կէօրիւնէն զիյրտէ ճինս վէ ֆիյաթը մուրագգամ էշեանըն միւնագասասը խիթամ պուլտուղընտան, Թարիխը իլանտէն հազիրանը րումինին Ցընճը բէնշէնպիհ կիւնիւ սաաթ 9ա գատար ֆիյաթը մուգարրէրէլէրինտէն թէնզիլաթ իճրասընա թալիպ օլանլարըն Իլմիյէ մուհասէպէսինէ միւրաճաաթ իթմէլէրի վէ էւվէլ մէզքիւրտէն 11ինճի ճումա իրթէսի կիւնիւ սաաթ 9ա գատար տախի 48 սաաթ զարֆընտա ևուզտէ պէշ թէնզիլ խուճճէթլէրին բէյլէրի գապուլ օլունուպ անտէն սօնրա թէնզիլաթ գապուլ օլունմայաճաղը իլան օլունուր.

	Ղշ.	Փր.
Սինօպըն սըրա պէշլիկ պէհէրի	7	15
Գուրու Թուղլա պէհէր պինի	118	
Քէպիր Միւրէքքէպ քիրէմիտի պէհէր պինի	100	
Ուժուր էկրի քիրէճի պէհէր գանթարը	7	
Զըրալը Ֆիլեօզ չամ բիւթիւկի	148	
Միւխթէլիֆ չիվօ պէհէր գըյէսի	3	35

5 հազիրան 1304

1835 — 3—3

Ոսկերչութեան ու լուսանկարչական պիտոյքներու

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԴԵՂՕՐԷԻՑ

Ժ. ԱԼԷՔՍԵԱՆ

Մատակարար Օսմանեան Ծովային Նախարարութեան

([illegible] Ճելալ Պէյ խանի դուռ, Թիւ 2)

Ըստ [illegible] արգոյ յաճախորդ[illegible], այս անգամ [illegible] մէջ ճիւղ մը հաստատած եմ լուսա[illegible] վերաբերեալ ամեն պիտոյից համար [illegible] խնդրոյ պիտի [illegible] թէ՛ [illegible] մաքրութեան եւ թէ գնոց չափաւորութեան մասին. վաճառատանս մէջ կը գտնուին Մոնքովէնի չոր բլաքները նոյն իսկ Բարիզի հաշւակալ տան՝ Վ. Էնձայի եւ Բարիզի յայտանդէններէ ասկի եւ արծաթ չքաղթամ ներով օժտեալ է՝ Ֆայլերի չոր բլաքներն որ Պոլսոյ մէջ գտնուած բոլոր բլաքները կը գերազանցեն, ինչպէս Պոլսոյ պատուաւոր լուսանկարք փորձով հաստատած են. կը գտնուին օպժէքթիֆ, չանդը նոյնա եւ քառթօն, ալպիւմինի լաւ տեսակ թուղթեր, բրոմըլէնէ եւ ադակիէ եւ քառթօն տիւռսիէ բիւվէթներ, մանիէզիւմի լամբեր եւ գունաւոր լապտերներ ու շաքներ եւ ամեն տեսակ դեղորայք.

Ֆայլերի բլաքները փորձել ուզող Պոլսոյ եւ գաւառաց լուսանկարք կրնան օրինակ առնալ ձրիաբար եւ անձամբ փորձել այն բլաքները.

Մթերանոցս Ֆայլերի եւ Մոնքովէնի Բըլաքներուն Պոլսոյ եւ Արեւելեան Րումէլիի համար միմիայն կեդրոնատեղին է. 1668

ՄԻ՛ ԳՆԷՔ

ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՅ ՄԸ

ԱՌԱՆՑ ՆԱԽԱՊԷՍ ԱՅՑԵԼԵԼՈՒ

ՍԻՆԿԷՐ

Ամերիկեան գործարանի մթերանոցներն

Ի ՂԱԼԱԹԻԱ, Եուքսէք Գալտըրըմ,

120

Քարաքէօյի աղբիւրին դէմ.

Ի ԲԵՐԱ, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ

Ի ՊՈԼԻՍ, Մահմուտ փաշա, 90

Ուրիշ ամեն տեղ՝ «Սինկէր»ի կարի մեքենային «կեղծերը» միայն պիտի գտնէք:

ՎՃԱՐՄԱՆԸ ԴԻՒՐՈՒԹԻՒՆ

(Տաքսիտով) 1761

ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՈՒՑ

Ընդ Հիլ Անգլիոյ, Կ. Պոլսոյ և Օտեսայի

ԹՈՎՄԱՍ ՈՒԻԼՍԸՆ ՈՐԴԻՔ ԵՒ ԸՆԿ.

Անուանք	Թոնօ	Անուանք	Թոնօ
[illegible]	2,000	[illegible]	4,500
Անճէլօ	3,000	Մարէնկօ	4,500
Արկօ	1,300	[illegible]	2,500
[illegible]	3,500	Միլօ	2,000
[illegible]	3,200	Նէրօ	2,000
[illegible]	2,000	Օթէլլօ	5,000
[illegible]	2,600	[illegible]	2,000
[illegible]	2,500	[illegible]	4,500
[illegible]	2,100	[illegible]	2,000
[illegible]	2,900	[illegible]	4,200
[illegible]	2,700	[illegible]	3,200
[illegible]	2,500	[illegible]	4,700
[illegible]	1,800	[illegible]	2,800
[illegible]	2,600	[illegible]	4,400
[illegible]	2,600	[illegible]	3,200
[illegible]	800	[illegible]	3,000
[illegible]	1,700	[illegible]	3,500
[illegible]	1,600	[illegible]	3,500
[illegible]	3,500	[illegible]	4,000
[illegible]	3,200	[illegible]	2,000
[illegible]	1,800	[illegible]	3,000
[illegible]	2,200	[illegible]	4,300
[illegible]		[illegible]	1,200
[illegible]	3,000	Թ. Ուիլսըն	3,000
[illegible]	3,000	[illegible]	4,300
[illegible]	1,200	[illegible]	2,800
[illegible]	2,300	[illegible]	3,600
[illegible]	2,000	[illegible]	4,600
[illegible]	2,200	[illegible]	3 000
Լէօ	2,000	[illegible]	4,100

Ուէլլօ շոգենաւն, ընդհանուր վաճառքով, Հըլէն մեկնած է ամսոյս 18ին և Յուլիս ամսոյ սկիզբն աստ կ'սպասուի,

Եսթօ շոգենաւը ընդհանուր վաճառքով Անվերսէն մեկնած է ամսոյս 2ին և 21ին աստ կ'սպասուի:

Ուղեւորներու համար ամեն դիւրութիւն կընծայուի

Աւելի մանրամասնութեանց համար դիմել առ Ֆ. ՀԻՒՏ ԵՒ ՌԻՑՕ Գործակալք

Թիւ 87-18, Քիւչիւք Միլլէթ խան Ղալաթիա

1601

ՖՐԷՏ. ԼԷՅԼԱՆՏ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՔ

Որք կանոնաւորապէս կը բանին Լիվրբուլի և Արեւելից միջև.

Անուանք	Թոնօ	Անուանք	Թոնօ
Ալճէրիան	2500	Դալմաթեան	3700
[illegible]	2500	[illegible]	3700
Անատոլեան	2500	[illegible]	3700
Աթէնեան	2500	Իբերեան	3500
Արաբեան	3700	Իլլիրեան	5500
[illegible]	6000	Իսթրեան	5500
[illegible]	6600	[illegible]	2200
[illegible]	800	[illegible]	2500
Սարդինեան	2000	[illegible]	800
[illegible]	700	Օլիմբիա	700
[illegible]	3700	Պէրսեան	3800
[illegible]	3700	[illegible]	6800
[illegible]	3700	[illegible]	6800

Ալճէրեան, շոգենաւը Նաւապետ, Տէյլիս Լիվրբուլէն ընդհանուր վաճառքով աստ հասաւ:

Հետեւեալ շոգենաւները ընդհանուր վաճառքով ամսոյս 27ին եւ յուլիս 2ին աստ կ'սպասուին.

Լէկոսեան, Նաւապետ Էլիս

Սայբէրեան, Նաւապետ Թ. Տէյվիս

Ուղեւորներու համար ամեն դիւրութիւն

Աւելի մանրամասնութեանց համար դիմել առ ԷՏՈՒԱՐՏ ԼԱՖՈՆԹԷՆ Գործակալ

Թիւ 1, Մէհմէտ Ալի փաշա խան, Ղալաթիա.

Նաւատէրք, Պարոնայք Ֆրէտ, Լէյլանտ և ընկ. Լիվրբուլ

Գործակալութիւնք

Կ. Պոլիս, Էտուարտ Լաֆոնթէն.

Ճիպրալթար, Պ. Պ. Թարվէր Եղբարք

Աղեքսանդրիա, Կ. Լ. Վահման և ընկ.

Մալթա, Օ. Ֆամիլիերի.

Շիրա, Ս. Վօրօգօրուլօ Որդիք և ընկ.

Զմիւռնիա, Պ. Ռէֆզօլ և ընկ. 1896

ԳԱՐԱԳԱՇԵԱՆ ԵՂԲԱՐՔ

ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉՔ

(1804)

Մեծ փողոց Գուլէ գաբուսու. Թիւ 667

Ամէն կերպ և ամէն չափու կենդանագիրներ, այսինքն Քարթ տը վիզիթ (չափաւոր), Կրուփ (խումբ), Քապինէ (մեծ), Մինեօն (փոքր). Պզտիկ տղայոց համար վայրկենական լուսանկար.

Կենդանագիրները մեծ գգուշութեամբ և ըստ վերջնագոյն կատարելութեանց արուեստին՝ կը շինուին.

Բարիզու, Լօնտոնի, Վիէննայի և Պերլինի անուանի գործատուններուն լուսանկարի մեքենաներ, գործիքներն և ամէն տեսակ նիւթերը, գործատանց գիներով կը ծախուին.

Ցանձնարարութիւնք գործատանց գիներով փութապէս կը կատարուին.

Լուսանկարչութեան վերաբերեալ նիւթերը մեզմէ գնողներուն լուսանկարչութեան ուսումն ձրիապէս կ'աւանդուի.

ԳԱՐԵՋՈՒՐ ՇԻՇԵՐՈՒ ՄԷՋ

ՍԹԻՒՆՖԷԼՏ (ԿՐԱՋ)

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԳՈՐԾԱՐԱՆ

ԱՆԶՈՒԳԱԿԱՆ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆ

Ընդհանուր կեդրոնատեղի

Մ. ՄՈՐԻՋԻՕ ՖՐԱՆԿԼ

Վոյվոտա, Վիդալիս խան, Ղալաթիա, Էլպիկ խանի քով

ՍԹԻՆՖԷԼՏի գործարանն, որ կը գտնուի ԿՐԱՋ քաղաքին մէջ (Ստիրիա), առաջնակարգ հաստատութիւն մ'է՝ 1852ին հիմնեալ, եւ Աւստրեւհունգարիոյ միւս գարեջրի գործարանաց արտածման մէջ առաջին տեղը կը բռնէ.

Ստինֆէլտի գործարանն 1887ին արտադրած է 45,000 հեքթոլիտր. 1684

ՍԱՌՈՅՑ ԱՄԵՆՈՒՆ ՀԱՄԱՐ

ՊԱՂՊԱՌ, ԹԱՓԱՆՑԻԿ, ԱՌՈՂՋԱՐԱՐ

Կը պատրաստուի ձեռամբ

ՍԱՌՈՅՑԻ ՕՍՄԱՆԵԱՆ ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Արտօնեալ կայսերական հրամանով

Կեդրոնատեղի Ընկերութեան՝ Ղալաթիա, Վոյվոտա, Կլավանի Խան, 4

ԱՄԵՆ ՈՔ ԳԻՏԷ ԹԷ ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՍԱՌՈՅՑՆ ԱՒԵԼԻ ԳԵՐԱԶԱՆՑ ՅԱՏԿՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ ՔԱՆ ԲՆԱԿԱՆ ՍԱՌՈՅՑԸ

ՍԱՌՈՅՑԻ ՕՍՄԱՆԵԱՆ ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ, նպատակ ունենալով ամենուն դիւրամատչելի ընել սառոյցը, Սգէնիայի մէջ հաստատած է այս օրինակ մեծագոյն հաստատութիւնն. Ընկերութիւնը քաղաքին գլխաւոր կողմերն եւ արուարձանի գիւղերուն մէջ մթերանոցներ հաստատած է, որք ընկերութեան որոշած սակագներով ՄԵԾԱՔԱՆԱԿ եւ ՓՈՔՐԱՔԱՆԱԿ կը վաճառեն օխան 30 փարայի, եւ յանուն Ընկերութեան բաժանորդագրութեան տետրեր կուտան, որք կը կրեն Ընկերութեան ցցուեալ կնիքը:

2	օխայի	36	առնելոց	տետրին	գինն	է	54	ղրշ. արծաթ
3	»	43	»	»	»	»	81	» »
4	»	43	»	»	»	»	108	» »

Ցանձնարարութիւնք կ'ընդունուին ի Գրասենեակն Ընկերութեան, 4, Կլավանի խան, ի կեդրոնական մթերանոցն Ֆնտըքլըի եւ բոլոր մթերանոցաց մէջ:

ԱՆՈՒԱՆ ԵՒ ՀԱՍՑԷՔ ԳԼԽԱՒՈՐ ՄԹԵՐԱՆՈՑԱՑ

ՊՈԼԻՍ, Թաշ խան, Պահչէ-Գաբու. Սուլթան Պայազիտ, Հասան-Փաշա Գարագօլ. Աք-Սէրայ, Վալիտէ սօքաք, Վալիտէ ճամի. Շահզատէ Պաշը, Վէզնէճիլէր. Գում-Գաբու, Քիրէճիւննի սօքաք. ԲԵՐԱ, Սըրա Սէլվի փողոց, Թաքսիմ. Բօզղա փողոց, 2, Բէրա. ՂԱԼԱԹԻԱ, Միլլէթ խան, Վոյվոտա.

Ֆնտըքլը, կեդրոնական մթերանոց, Թրամուէյին կայարանին մօտ. Պէշիկթաշ, Գալաֆաթ Նէրիտէ, Նաւամատոյցին մօտ. Արնաւուտքէօյ, Ռումէլի Հիսար, Պօյաճիքէօյ, Պէյլէրպէյի, Գանլըճա, Գանտիլլի, Նաւամատոյցին քով. Ստէնիա, ի գործարան սառոյցի. Թէրափիա, Օթէլ Բէզալեանի դէմ. Իւսկիւտար, կառաբարձ շոգենաւուն մօտ. Գատըքէօյ Մօտա, Բիէգրօ Ռիզզանի թանջարավաճառին քով. Իչէրնոց էսքի Մեծ կղզի, Հէյպէլի, Պուրկազ նաւամատոյցին մօտ. Էրէնքէօյ, Երկաթուղւոյ կայարանին մօտ. 1807 8—13

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԴԱՈՒԼԸՄԱՆ ԵՒ ՊԼՈՒՄՊԵՐԿԻ

Ղալաթիա Պէօյիւք Միլլէթ խան, միջազգային թղթատարատան վրայի յարկը



Սոյն վաճառատան մէջ խիստ աժան գներով կը վաճառուին ամեն տեսակ ճերմակեղէնք, կանանց համար կրկնոցներ, տղայոց համար հագուստներ, կիսաշրջազգեստներ, քօսէներ, օժտի համար ճերմակեղէնք, բանուածքներ, բազմատեսակ գուլպաներ, թաշկինակներ և այլ այս տեսակ ապրանքներ.

Այս ապրանքներ, որոց ամենքն ալ լաւ տեսակէ են, կը վաճառուին թէ՛ փոքր և թէ մեծ քանակութեամբ.

Այս ապրանքներ կը պատրաստուին Վիէննայի և Պերլինի յատուկ գործարանաց մէջ. Նոյնպէս Անգլիաէն, Իտալիաէն և եւրոպական ուրիշ երկիրներէ ևս ապրանքներ կը բերուին:

Գաւառներէ եկած յանձնարարութիւնք կը կատարուին եթէ փոխարէնը փոխանակագրով և կամ թղթատարական դրօշմով ղրկուի:



Չը հաւնուած ապրանքները ետ կ'առնուին և ստակը ետ կը տրուի զեղչելով փոխադրութեան ծախքը: 1180

ԲԺԻՇԿՆԵՐՈՒ ՀԱՐՑՈՒՑԷՔ

ԲԱՈՒՏԻՆԱ (Գորսիքա), Բնական հանքաջուր երկաթախառն, թթուային, կազային. ամենազդու դարման ընդդէմ արեան տկարութեան, դեղնութեան, տենդի, ստամոքսի ցաւերու, եւ արեան նուազութենէն յառաջ եկած ամեն հիւանդութեանց

ՀԱՆՔԱՅԻՆ ԲՈԼՈՐ ՋՈՒՐԵՐԷՆ ԳԵՐԱԶԱՆՑ.

Հանքին տէրն է Ֆ. Մոլինարի, 2, Պոմօ փողոց, Մարսիլիա: Կ. Պոլսոյ մէջ գործակալք են ԳԱՌԱՎԻԱ եւ ԲԵՌԴԻՒՔԻՆԻ. Ալաու խան, 4, Մաքսի փողոց, Ղալաթիայ

Կը ծախուի գլխաւոր դեղարանաց մէջ. 821

L'AVENIR DES FAMILLES Լ'ԱՎԸՆԻՐ ՏԷ ՖԱՄԻՅԼ

ԸՆՏԱՆԵԱՑ ԱՊԱԳԱՅՆ

Ապահովագրական փոխադարձ Ընկերութիւն՝ Դրամագլխոյ վերակազմութեան համար 1880ին կազմեալ ի Լիոն նոտար Միշիֆիօ տը Պէլէօի ստացած պայմանագրով

Ընկերութեան կեդրոնատեղին է 61, Ռէփիւպլիք փողոց, 61—Լիոն (Ֆրանսա)

Ապահովագրեալ դրամագլուխք 55 միլիոն ֆրանք

Մինչեւ ցայսօր եղած վճարմունք են, 1,000,000 ֆրանք

Տարին չորս վիճակահանութիւն՝ Յունվար, Ապրիլ, Յուլիս և Հոկտեմբեր

Վարչական խորհուրդ. Պ. ՀԻՎԼԻՕ, բժիշկ ի Լիոն, Նախագահ.
Պ. ԱԼԼԷՕ, Նախկին տնօրէն, հիմնադիր ընկերութեան, ի Լիոն.
ՕՏԻՖՕՒ, Նախկին շահսաղ չորրորդ շրջանակի ի Լիոն.
ՊՈՄ, հասութատէր ի Լիոն. ԳԻԼԷԱՒՔ կալուածատէր ի Լիոն. ՄԱՌԴԻԷԼ կալուածատէր ի Լիոն. ՌԱԹ, հասութատէր ի Լիոն. ԺԻՆԷՆ, ի Լիոն Մ. Ժ. ԳԱՀԷՆ, հաշուակալ ի Լիոն, հաշուեքննիչ. Պ. ԱԼԼԷՕ, տեսուչ պատուհրակ, ընդհանուր տնօրէն:

Լ'ԱՎԸՆԻՐ ՏԷ ՖԱՄԻՅԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆ, որ հաստատուած է նպաստելու համար փոքր խնայողութեան, արագ զարգացում մ'ունեցած է: Իւր նպատակն է որոշեալ պայմանաժամի մէջ վերակազմել դրամագլուխն, կանխավճարներու հաւանականութեամբ:—Մուրհակներ կուտայ թէ՛ ի փոխարէն միակ վճարի մը և թէ ամսական համեստ վճարներու (կարելի է ստորագրուիլ ամսական մինչեւ մէկ ֆրանքէ սկսեալ): Ապահովագրեալներ ունինք որոնք մէկ ֆրանք մը վճարած էին և երկու հարիւր ֆրանք ստացած են:

Վճարմունք կը կատարուին վիճակահանութեամբք, որք երեք ամիսն անգամ մը տեղի կ'ունենան ի կեդրոնատեղին ընկերութեան, ի ներկայութեան վարչական խորհրդին և շահակիցներու, հաշուական այնպիսի գործողութեամբք զորս ամեն մարդ կրնայ ստուգել:

Ընկերութեան գործառնութիւնները պէտք չէ շփոթել վիճակահանութեանց հետ ուր տոմսերը բնաւ արժէք չունին վիճակահանութենէն յետոյ: Մեր մօտ, ընդհակառակն, ամենուն ալ վճարմունքն ապահովեալ է, քիչ մը կանուխ կամ քիչ մը ուշ, ըստ գիպուածի.

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹԻՒՆՔ

Ընկերութեանս գործառնութիւնք բազմազան են, ինչպէս Շարժական արժէից և փոխ տրուած դրամագլխոց ապահովագրութիւն, կորուսեալ դրամագլխոյ մը վերակազմութիւն, Երաշխաւորութիւնք և Գլխավճարք՝ փոխառութեանց և ձարտարարուեստից և Վաճառականութեան մէջ գործածուած դրամագլխոց, Մանկանց համար Օժիտք, Հանգստեան մասունք ծերութեան համար, Ցկեանս եկամուտներու կազմութիւն, և մի բան այն ամեն գործառնութիւնք որոց նպատակն է խնայողութիւն:

Այս արդիւնքը ձեռք բերելու համար, Ընկերութիւնս հաստատած է զանազան սակագներ որոց վճարմունք տեղի կ'ունենան առաւել կամ նուազ մերձաւոր ժամանակաց մէջ, ըստ բաղձանաց ապահովագրելոցն:

ՍԱԿԱԳԻՆ Ա.

Ամսական 1 ֆրանք, որ վճարուի միայն 60 ամիս, իրաւունք կուտայ 1000 ֆրանքի մուրհակի մը 10 թիւերով որոց ամենքն ալ հաւասարապէս կը մասնակցին ամեն բաշխման, մինչեւ ամբողջովին վճարումն 1000 ֆրանքին: Մարդ կրնայ ստորագրուիլ այնչափ անգամ 1000 ֆրանքնոց մուրհակի որչափ ամսական վճարէ մէկ ֆրանքնոց:

5 ֆրանքի ամսական բաժ մը, որ 60 ամիս վճարուի, իրաւունք կուտայ, ըստ ընտրութեան ստորագրողին, 5000 ֆրանքի ընկերութեան արժեթղթի մը, կամ միմիայն 3000 ֆրանքի և Լիոն քաղաքի պարտաթղթի մը, որք կը մասնակցին ամեն վիճակահանութեանց և պարգեւներուն, մինչեւ անգամ 50,000 ֆրանքի բաժնին:

Ի փոխարէն ամսական հինգ ֆրանքի, ստորագրողն իրաւունք ունի, ըստ իւր ընտրութեան
1. 500 ֆրանքի, առանձնաշնորհեալ մուրհակ տոկոսներով որք տարուէ տարի կ'աւելնան մինչեւ ցվճարումն, կամ
2. 5000 ֆրանքի, Մուրհակք Սակագին Ա., կամ վերջապէս
3. 1000 ֆրանքի, հիմնադրի մուրհակի մէկ տասներորդով.

Ծան. Անցեալ տարեշրջանին մէջ հիմնադրի Մուրհակներն ստացան 80 ֆրանք շահաբաժին, և ներկայ տարեշրջանին մէջ, շահաբաժինը պիտի լինի 100 ֆրանք մէն մի թուղթի վրայ:

Ի փոխարէն ամսական 8 ֆրանքի, ստորագրողն ըստ իւր ընտրութեան իրաւունք ունի 3000 ֆրանքի, Մուրհակք Սակագին Ա. և առանձնաշնորհեալ Մուրհակի մը՝ 500 ֆրանքէն վճարելի, և տալով տոկոսներ որք երթալով կ'աճին մինչեւ վճարման օրը:

Ծան. կը մնայ միայն ի վճարել 1921 առանձնաշնորհեալ մուրհակ.

Ի փոխարէն ամսական 10 ֆրանքի, ստորագրողն իրաւունք ունի ըստ իւր ընտրութեան.

3000 ֆրանքի, Մուրհակք Սակագին Ա. և Պարտաթղթի մը, կամ 1877ի Գրէտի Ֆոնսիէէն, կամ 1871ի Վիլ տը Բարիէն, կամ Վիլ տը Մարսէյլէն. (այս երեք արժեթղթեր վճարելի են 400 ֆրանքէն) կամ 1883ի Օպլիկասիոն Ֆոնսիէռ մը՝ 500 ֆրանքնոց, կամ վերջապէս

5000 ֆրանքի, Մուրհակք Սակագին Ա. և Բանամայի պարտաթղթի մը, շրջաբերութիւն 1883ի.

Վերջապէս, ի փոխարէն ամսական 12 ֆրանքի, ստորագրողն ըստ իւր ընտրութեան իրաւունք ունի.

3000 ֆրանքի, Մուրհակք Սակագին Ա. ինչպէս նաեւ 1879ի Ֆոնսիէռ կամ Գոմիւնալ Օպլիկասիոնի մը, վճարելի 500 ֆրանքի, կամ վերջապէս Բրոմէրէս Օպլիկասիոնի մը (Գրէտի Ֆոնսիէէն հետ միացուած և 1000 ֆրանքէն վճարելի):

ՍԱԿԱԳԻՆ Բ.

Այս սակագնոյն մէջ, Մուրհակներն 500 ֆրանքէն վճարելի են մէկ տարիէն առ առաւելն միայն 25 տարուան ժամանակամիջոցի մը մէջ, կանխավճարներով որք տեղի կ'ունենան երեք ամիսն անգամ մը վիճակահանութեամբք:—Բաժիններն ամսական են և 2 ֆրանքի. առ առաւելն կը պահանջուին մինչեւ 15 տարի. կը դադրին երբ մուրհակը վաստկի վիճակահանութեան մէջ:

ՍԱԿԱԳԻՆ Գ.

Այս սակագնոյն մէջ, մուրհակք վճարելի են մէկ տարիէն առ առաւելն մինչեւ 12 տարուան ժամանակամիջոցի մը մէջ, կանխավճարներով որք տեղի կ'ունենան ամեն տարի յունուարին, ապրիլին, յուլիսին և հոկտեմբերին. առաջին երեքն 100 ֆրանքէն և հոկտեմբերինն 500 ֆրանքէն:—Ամսական բաժիները 2 ֆրանքի են և միայն 50 ամիս վճարելի են:

ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Լ'ԱՎԸՆԻՐ ՏԷ ՖԱՄԻՅԼ ապահովագրական ընկերութիւն մ'է հաստատեալ ըստ հրամանագրոյն 1868 յունուար 22ի, և հետեւաբար կը գործէ ընդ հսկողութեամբ պետութեան: Հետեւ լինելով շահադիտման կամ առեւտրական ո և է գործէ, ո և է վտանգի ենթակայ չէ:

Իւր գանձած դրամը Ընկերութիւնը կը գործածէ Պետական Արժեթղթոց, Գանձոյ Թուղթերու կամ Պետութեան, քաղաքաց և նահանգաց երաշխաւորութիւնը կրող թուղթերու. այս գումարը բաւական է ապահովելու համար իւր շրջաբերութեան հանած բոլոր մուրհակներուն վճարումն, այնպէս որ մէն մի ստորագրող բոլորովին ապահով է ստանալու իւր ապահովագրութեանց ամբողջ գումարը:

Տեղեկութեանց և բաժանորդագրութեան համար դիմել առ Պեարոս Էֆ. Ամպարճեան, գործակալ Ընկերութեան ի Կ. Պոլիս, Թաշ խան, Թիւ 40, Պահչէ-Գաբու, Պոլիս: 1081

Ա. Զ. Դ.

Պատիւ ունիմ ծանուցանել ծխողներու վերաբերեալ առաքելոյն [illegible] [illegible] թէ Կ. Պոլիս հաստատած եմ մթերանոց մը իմ սիկարէթի ճեմը [illegible] [illegible]

JOB

Պ. Ժան Լաֆոնթէնի վաճառատանն է ի Ղալաթիա, 17, Մահմուտիէ փողոց: Յարգելի կարգ անոյ դիմել՝ իրենց ընկլիք յանձնարարութեանց համար: Ապահով պիտի լինին թէ պիտի խորտ են կեղծերու ծախող վաճառականներէ, որք անխղճութեամբ կը խորդացեն մեր թուղթերը:

Ինչ կ'ուզեն ուղղել բանակութեանց համար, գործարանին գնով պիտի վաճառուի իրենց: 1400 29—31

ԳՈՒԻՆ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ

ՕՒԼԱՅԸՆՍ

Ձրիակի ապահովագրութիւն: Դիմել առ գործակատարն ընկերութեան, Պ. Վ. Ալիֆաղ, Ալիֆաղ խան Պահչէ-գաբու Պոլիս կամ Ղալաթիա [illegible] փողոց Իպլէ կ խան թիւ 6. 686

Արտօնատէր — Օ. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ